



«Անպտղության տարածվածությունը Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում»

քանակական հետազոտություն

ՀԱՅԱՍՏԱՆ 2022

Բովանդակություն

Երախտիքի խոսք	4
Հապավումներ	5
Ներածություն	5
Համառոտ ակնարկ	8
ՄԱՍ 1. Քանակական հետազոտության մեթոդաբանություն	16
Հետազոտության ընտրանք	17
Հետազոտության իրականացում և վերահսկողություն	18
ՄԱՍ 2.	19
Բաժին 1. Հարցվողների սոցիալ-ժողովրդագրական բնութագիր և կենսագործունեության պայմաններ	19
Բաժին 2. Սեռական կյանք և ամուսնություն	26
Բաժին 3. Դաշտանային ցիկլի բնույթ	28
Բաժին 4. Խաթարված սեռական ֆունկցիա, մարմնասեռական զարգացման առանձնահատկություններ	29
Բաժին 5. Երեխաներ ունենալու ցանկություն և ունակություն	31
5.1 Երեխաներ ունենալու ցանկություն և ունակություն. կին հարցվողներ	31
5.2. Երեխաներ ունենալու ցանկություն և ունակություն. տղամարդ հարցվողներ	34
Բաժին 6. Հղիության ելքերի պարզաբանում	38
6.1 Հղիության ելքերի պարզաբանում. Կին հարցվողներ	38
6.2. Հարցվողների կանանց հղիության ելքերի պարզաբանում. տղամարդ հարցվողներ	40
Բաժին 7. Անձնական փորձ ու կարծիք հղիության արհեստական ընդհատման (աբորտների) վերաբերյալ	42
7.1 Անձնական փորձ ու կարծիք հղիության արհեստական ընդհատման (աբորտների) վերաբերյալ. Կին հարցվողներ	42
7.2 Անձնական փորձ ու կարծիք հղիության արհեստական ընդհատման (աբորտների) վերաբերյալ. տղամարդ հարցվողներ	48
Բաժին 8. Անձնական փորձ ու կարծիք բեղմնականիման միջոցների վերաբերյալ	52
Բաժին 9. Մարմնի կառուցվածքի և հիվանդությունների արտաքին ախտանշանների ինքնագնահատում	55
Բաժին 10. Առողջական վիճակ, հիվանդությունների ախտանշաններ և պատմություն	58
Բաժին 11. Առաջնային բուժօգնության, տեղեկատվության և ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաների հասանելիություն	64
ՄԱՍ 3.	73
Բաժին 12. Անպտղության տարածվածությունը	73
12.1. Պտղաբերության խմբերի սոցիալ-ժողովրդական բնութագրերը և կենսապայմանները կանանց և տղամարդկանց շրջանում	74
Բաժին 13. Անպտղության ֆիզիոլոգիական և այլ բնութագրիչներ	85

13.1. Սեռական հարաբերություններ	85
13.2. Դաշտան և սեռական ֆունկցիա	88
13.3. Հղիությունների ելքերը և հղիությունների արհեստական ընդհատումների դեպքերը երկրորդային անպտղություն ունեցողների շրջանում	90
13.4. Առողջական վիճակ, հիվանդությունների արտաքին ախտանշանների ինքնագնահատում	92
Ամփոփում և առաջարկներ	98

Երախտիքի խոսք

Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ ՉԿ-ն (APR Group) իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր այն անձանց և կառույցներին, որոնք այս կամ այն կերպ իրենց մասնակցությունն են ունեցել հանրապետության համար հույժ կարևոր հիմնախնդիրներից մեկի՝ անպտղության տարածվածության ուսումնասիրության գործընթացում:

Առանձնակի շնորհակալություն ենք հայտնում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամին՝ ֆինանսական աջակցության և ուսումնասիրության ընթացքում մասնագիտական խորհրդատվություն իրականացնելու համար: Շնորհակալություն ՉՉ առողջապահության նախարարությանը, մասնավորապես, Մոր և մանկան առողջության պահպանման վարչության անձնակազմին՝ ի դեմս ղեկավար Ն. Փաշայանի, հետազոտության հանդեպ ցուցաբերած հետաքրքրության համար:

Խորին երախտագիտություն ենք հայտնում ծրագրում ներգրավված ՉՉ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտի բժիշկ-փորձագետներին՝ Մանկաբարձության, գինեկոլոգիայի և վերարտադրողական առողջության ամբիոնի վարիչ, Պտղաբերության կենտրոնի հիմնադիր, գինեկոլոգ/ռեպրոդուկտոլոգ, պրոֆեսոր Էդուարդ Համբարձումյանին և Մանկաբուժության ամբիոնի դոցենտ, Սուրբ Մարիամ ընտանիքի առողջության կենտրոնի համահիմնադիր, գինեկոլոգ/ռեպրոդուկտոլոգ, բ.գ.թ. Մերի Խաչիկյանին՝ ուսումնասիրության բոլոր փուլերում գործուն մասնակցության և զգալի ներդրման համար:

Շնորհակալ ենք ծրագրում ներգրավված անձնակազմին, վերլուծաբաններին, հարցազրուցավարներին, դաշտային աշխատանքների համակարգողներին և որակի վերահսկողներին անաչառ և բարեխիղճ աշխատանքի համար, ինչպես նաև 3000-ից ավել հարցվողներին, ովքեր, չնայած թեմայի նեղ անձնական բնույթին, անկեղծորեն պատասխանել են բոլոր հարցերին:

Սույն զեկույցը պատրաստվել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Չեկույցում արտահայտված կարծիքները հեղինակային են և կարող են չհամընկնել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տեսակետին:

Հապավումներ

ԱՅԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄԲ	Արտամարմնային բեղմնավորում
ԴՊ	Դժվարանում եմ պատասխանել
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԱԽ /APR Group	Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ
ՀՊ	Հրաժարվում եմ պատասխանել
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ
ՎԱՊՄԳԻ	Վերարտադրողական Առողջության Պերինատոլոգիայի մանկաբարձության և գինեկոլոգիայի Հանրապետական Ինստիտուտ

Ներածություն

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ վերջին 3 տասնամյակների ընթացքում ծնելիության ցածր, անգամ պարզ վերարտադրություն չապահովող մակարդակով (1,57) պայմանավորված՝ արձանագրվել է ծնելիության և ժողովրդագրական ցուցանիշների վատթարացում: Ծնելիության ցուցանիշը շարունակաբար նվազել է (1990 թ.՝ 22,5%, 2000 թ.՝ 10,6%, 2010 թ.՝ 14,7%, 2018 թ.՝ 12,3%)՝ կրճատվելով 1,8 անգամ: Որպես հետևանք, կենդանածինների թիվը 1990 թ. համեմատ կրճատվել է 2,2 անգամ (2019 թ.՝ 36131 ծնունդ՝ 1990 թ. 79882-ի դիմաց), իսկ բնական աճի ցուցանիշը՝ 4,9 անգամ (2019 թ. այն կազմել է՝ 3,3%՝ 1990թ. 16,3%-ի դիմաց): Ծնելիության ցուցանիշի անկման հետևանքով 1990 թ. համեմատությամբ 2018 թ.-ին արձանագրվել է 0-14 տարեկան երեխաների թվի կրճատում 1/3-ով՝ կազմելով 20,2%, իսկ անաշխատունակ բնակչության թվի կրկնապատկում՝ մինչև 11,6%, ինչը վկայում է բնակչության ծերացման մասին: Ծնելիության ցուցանիշի անկման պարագայում շարունակում են օրակարգային մնալ հետևյալ խնդիրները¹

- 1) հղիների ախտաբանությունների վաղ հայտնաբերման և բուժման ոչ բավարար մակարդակ, որի արդյունքում արձանագրվում է հղիության անբարենպաստ ելքով պայմանավորված վերարտադրողական կորուստների բարձր մակարդակ (ինքնաբեր վիժում, մեռելածնություն, չգարգացող հղիություն, վաղաժամ ծննդաբերություն նորածնի՝ ցածր քաշով), որոնց թիվը վերջին տարիներին, չնայած զգալի նվազմանը, այնուամենայնիվ տատանվում է տարեկան 2500-3000 շրջանակներում.
- 2) մանկական մահացության իջեցման տեմպերի դանդաղում, պերինատալ պատճառներից և նորածնային շրջանի մահերի, անհաս, ցածր քաշով և ախտաբանություններով ծնված նորածինների բարձր տեսակարար կշռով.

¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140281>

3) զույգերի՝ մինչ հղիությունը հետազոտման և նախաբեղմնավորման խնամքի ծառայությունների բացակայություն.

4) հանրապետությունում անպտուղ ամուսնության տարածվածություն:

Անպտղության տարածվածության ցուցանիշները տարբեր երկրներում տատանվում են 8-25 տոկոսի սահմաններում: Եվրոպական երկրներում այն 10% է, Ռուսաստանի Դաշնության տարբեր տարածաշրջաններում՝ 8-23%, Ղազախստանում՝ 10-15%, Ուկրաինայում՝ 15-17%, Չինաստանում՝ 12%, ԱՄՆ-ում՝ 6-15%, Կանադայում՝ 16%: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանման՝ անպտղության 15% մակարդակը համարվում է ճգնաժամային և անդրադառնում է ժողովրդագրության, ծնելիության վրա: Նախկինում Հայաստանում անպտղության տարածվածության ցուցանիշի բացահայտմանն ուղղված քանակական ներկայացուցչական հետազոտություններ իրականացվել են 1990, 1998, 2009 թվականներին:

1989-1990թթ. Երևան քաղաքում (Կ. Բ. Ակունց և համահեղինակներ) իրականացվել է 4349 ամուսնացած կանանց շրջանում անպտղության տարածվածության Էպիդեմիոլոգիական հետազոտություն, համաձայն որի առաջնային անպտղությունը կազմել է 3,2%, իսկ երկրորդայինը՝ 21,4%:

1997-1998թթ. «Հանուն ընտանիքի առողջության» հասարակական կազմակերպության կողմից (Մ.Ա. Խաչիկյան և համահեղինակներ) ազգային մակարդակով իրականացվել է վերարտադրողական տարիքի 1400 կանանց և 1400 տղամարդկանց շրջանում անպտղության տարածվածության Էպիդեմիոլոգիական հետազոտություն, համաձայն որի կանանց շրջանում առաջնային անպտղությունը կազմել է 3,4%, իսկ երկրորդայինը՝ 28,5%: Տղամարդկանց շրջանում առաջնային անպտղությունը կազմել է 3,3%, իսկ երկրորդայինը՝ 15,2%:

2009թ.-ին ՀՀ առողջապահության նախարարության, Պրենստիտուցիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտի կողմից (Ռ. Աբրահամյան և համահեղինակներ) ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության ներգրավմամբ հայաստանյան 1618 տնային տնտեսություններում իրականացվել է կլինիկական և սոցիալական հետազոտություն, համաձայն որի առաջնային անպտղությունը կանանց շրջանում կազմել է 5.4%, իսկ երկրորդայինը՝ 11.4%: Տղամարդկանց շրջանում առաջնային անպտղությունը կազմել է 2.3%, իսկ երկրորդային անպտղությունը՝ 2.8%: Տվյալ ուսումնասիրության արդյունքները վերանայվել և զեկույցը վերահրատարակվել է 2014թ.-ին:

2020-2021թթ.-ների ընթացքում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» (APR Group) ՀԿ-ի կողմից իրականացվել է ընտրանքային սոցիոլոգիական հետազոտություն 3000 կանանց և տղամարդկանց շրջանում, որի նպատակն է պարզել անպտղության տարածվածությունը Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում: Ուսումնասիրության արդյունքները հիմք են հանդիսանալու ապացույցների վրա հիմնված առողջապահական նպատակային քաղաքականության և ռազմավարության մշակման համար:

Սույն հաշվետվության մեջ ներկայացված են քանակական հետազոտության մեթոդաբանությունն ու արդյունքները: Մանրամասն ներկայացված են հարցվողների սոցիալ-

Ժողովրդագրական նկարագիրը, ապրելակերպին, սեռական կյանքին, հակաբեղմնավորիչների կիրառությանը վերաբերող հարցեր, հղիությունների արհեստական ընդհատումների փորձին, հղիությունների ելքերին, ինչպես նաև առողջական վիճակին վերաբերող և մի շարք այլ հարցեր: Անպտղության տարածվածությունը բնորոշելու համար առանձնացվել են հարցվողների այն խմբերը, որոնք համարվում են անպտուղ, պտղաբերներ և ենթադրյալ պտղաբերներ, ինչպես նաև պտղաբերության անհայտ կարգավիճակ ունեցողներ: Սույն զեկույցն ամփոփում է խմբերի նկարագրությունը՝ ըստ սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների, ապրելակերպի պայմանների և առողջական վիճակը բնորոշող մի շարք ցուցանիշների:

Չեկույցում ներկայացված են նաև մի շարք առաջարկներ, որոնք անհրաժեշտ է դիտարկել ոլորտում բարեփոխումներին ուղղված քայլեր ձեռնարկելիս և քաղաքականություն մշակելիս:

Համառոտ ակնարկ

Վերջին տարիներին ՀՀ-ում արձանագրված ծնելիության նվազումը հանգեցնում է պարզ վերարտադրության գործընթացի խաթարմանը: Վերջինիս պատճառ կարող են հանդիսանալ արտագաղթը, վերարտադրողական վարքագծի փոփոխությունը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը և այլ պատճառներ: Բացի այդ, 2020 թվականի 44-օրյա պատերազմն իր հետևանքներով էլ ավելի է ընդգծում տվյալ խնդրի արդիականությունը հանրապետությունում:

Նախկինում Հայաստանում անպտղության տարածվածության ցուցանշի բացահայտմանն ուղղված քանակական ներկայացուցչական հետազոտություններ իրականացվել են 1990, 1998, 2009 թվականներին, որոնց բացահայտումներով անպտղության աստիճանը կազմել է համապատասխանաբար 24,6%, 31,9%, իսկ 2009թ²-ի ՎԱՊՄԳԻ-ի հետազոտության արդյունքներով՝ կանանց շրջանում՝ 16,8% (որից 5,4%-ը առաջնային և 11,4%-ը երկրորդային անպտղություն), իսկ տղամարդկանց շրջանում՝ 5,1% (որից 2,3%-ը առաջնային և 2,8%-ը երկրորդային անպտղություն): 2020-2021թ-ին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ ՀԿ-ի կողմից իրականացվել է ընտրանքային հետազոտություն ՀՀ բնակչության շրջանում: Հարցումներին մասնակցել է վերարտադրողական տարիքի 3000 անձ, որոնցից 1532-ը տղամարդ, իսկ 1468-ը կին: Հարցումներն իրականացվել են տնային տնտեսություններ այցելությունների միջոցով/ընթացքում դեմ առ դեմ հանդիպումների տեսքով՝ համակարգչային CAPI³ ծրագրի կիրառությամբ: Հետազոտության ընտրանքն ընդգրկել է Երևան քաղաքը և ՀՀ բոլոր մարզերը՝ բնակչության թվի համամասնությամբ:

Վերարտադրողական առողջության ոլորտում տարբեր տերմինաբանության և սահմանումների օգտագործման պատճառով, հատկապես անպտղության տարածվածության վերաբերյալ, հրապարակված տվյալները ազգային և միջազգային մակարդակներում հաճախ շփոթություն են ստեղծում և դժվարեցնում հրապարակված տվյալների և միտումների համեմատությունը: Համաձայն ԱՀԿ-ի⁴, «**Անպտղությունը**» արական կամ իգական սեռի վերարտադրողական համակարգի հիվանդություն է, որը բնորոշվում է հղիության ձախողմամբ՝ 12 կամ ավել ամիսների ընթացքում կանոնավոր և անպաշտպան սեռական հարաբերությունների պարագայում: Անպտղության պատճառաբանական գործոնները կարող են ի հայտ գալ **միայն կնոջ կամ միայն տղամարդու** մոտ. հնարավոր է նաև **արական և իգական գործոնների համակցություն**: Սակայն հաճախ հանդիպում է **անբացատրելի անպտղություն**: Այս հետազոտության տվյալների վերլուծության ժամանակ հիմք է հանդիսացել ԱՀԿ-ի Մահացության և հիվանդացությունների վիճակագրության (ICD-11) վերանայված միջազգային դասակարգումը

² Տվյալ ուսումնասիրության արդյունքները վերանայվել, և զեկույցը վերահրատարակվել է 2015թ.-ին:

³ Համակարգչային օմնիդակությամբ անհատական հարցազրույց. հարցազրույցների իրականացման տեխնիկա է, որի կիրառման ժամանակ, հարցազրույցավարը հարցվողի հետ դեմ առ դեմ հարցազրույցի ժամանակ ստացված տեղեկատվությունը մուտքագրում է համակարգչում տեղադրված էլեկտրոնային հարցաթերթում

⁴ WHO definition of Infertility, https://www.who.int/health-topics/infertility#tab=tab_1

(տարբերակ՝ 02/2022)⁵, որում հստակեցվել են **Կանանց և տղամարդկանց առաջնային և երկրորդային անպտղության** (primary and secondary infertility in female and males) կլինիկական սահմանումները: Այս հետազոտության նպատակներին հասնելու համար հիմք են հանդիսացել նաև «Անպտղության (Infertility)», «Ամլության/Չբերության (Sterility) և Պտղաբերություն (Fecundity) միջազգայնորեն ընդունված համաճարականաբանական և ժողովրդագրական սահմանումները, քանի որ ԱՀԿ-ի անպտղության նոր սահմանումները կլինիկական բնույթի են: *Նման մոտեցումը ազգային և միջազգային մակարդակներում նախկինում իրականացված հետազոտությունների հետ համեմատություններ անելու և միտումները պարզաբանելու հնարավորություն է տալիս:*

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ **առաջնային անպտղություն** ունի հարցվողների 1,7%-ը: Նրանք այն զույգերն են, որոնք 12 կամ ավելի ամիս կանոնավոր, անպաշտպան սեռական հարաբերությունների պարագայում չեն հասել հղիության:

Երկրորդային անպտղություն ունի հարցվողների 15,1%-ը: Նրանք այն զույգերն են, որոնք անցյալում ունեցել են առնվազն 1 երեխա, սակայն վերջին 12 կամ ավելի ամիս կանոնավոր, անպաշտպան սեռական հարաբերությունների պարագայում չեն հասել հղիության: Երկրորդային անպտղության խմբում ներառված են նաև այն զույգերը, որոնք ունեն **չբերություն**: Նրանք հարցվողների 0,9%-ն են, այն զույգերը, որոնք 12 կամ ավելի ամիս կանոնավոր, անպաշտպան սեռական հարաբերությունների պարագայում հասել են հղիության, բայց չեն ունեցել կենսունակ երեխա՝ ինքնաբեր վիժման, չգարգացող հղիության կամ այլ պատճառներով:

Տվյալ ուսումնասիրության մեջ կիրառվել է նաև **պտղաբերության անհայտ կարգավիճակ** տերմինը, որտեղ հաշվարկվել են այն հարցվողները, ովքեր երեխա չունեն, եթե՝ 1) ամուսնության տևողությունը 12 ամսից պակաս է և այդ ընթացքում չեն կիրառել բեղմնականխման միջոցներ, կամ 2) չեն ցանկանում (մոտ ապագայում) երեխա ունենալ և վերջին 2 տարվա ընթացքում մշտապես օգտագործում են բեղմնականխման միջոցներ: Նրանք կազմել են հարցվողների 9%-ը:

Ենթադրյալ պտղաբեր և պտղաբեր են համարվում այն հարցվողները, ովքեր երբևէ ամուսնացած են եղել կամ հարաբերություն են ունեցել, չեն հանդիսանում առաջնային, երկրորդային անպտղուղներ և չունեն պտղաբերության անհայտ կարգավիճակ: Այսպես՝ ներկայումս հղի կամ վերջին երկու տարիների ընթացքում մանկանը կրծքի կաթով կերակրող կինը համարվում է պտղաբեր, իսկ ենթադրյալ պտղաբեր է համարվում երբևէ հղիացած և առնվազն 1 երեխա ունեցող կինը, ով սովորաբար օգտագործում է որևէ բեղմնականխման միջոց և չի պլանավորում մոտ ապագայում երեխա (ներ) ունենալ (բացառությամբ հղիների և վերջին երկու տարիների ընթացքում մանկանը կրծքով կերակրողների): Նրանք կազմել են հարցվողների 74,2%-ը:

Անպտղության տարածվածությունը

Այսպիսով՝ վերարտադրողական տարիքի միասին ապրող զույգերի շրջանում անպտղության տարածվածությունը կազմում է 16,8%, որում՝

- Առաջնային անպտղություն՝ 1,7%
- Երկրորդային անպտղություն՝ 15,1%, տվյալ դեպքում երկրորդային անպտղության մեջ ներառվում են նաև այն անձիք, ովքեր երբևէ հղիացել են, սակայն կենսունակ երեխա չեն ունեցել:

⁵ The WHO Eleventh Revision of the International Classification of Diseases (ICD-11) for Mortality and Morbidity Statistics (Version: 02/2022) <https://icd.who.int/browse11/l-m/en/#/http://id.who.int/icd/entity/1237004558>

- Կին հարցվողների շրջանում առաջնային անպտղությունը կազմում է 1,3%, երկրորդայինը՝ 13%, իսկ տղամարդ հարցվողների շրջանում առաջնային անպտղությունը 2,2% է, երկրորդայինը՝ 17,6%:
- Առաջնային անպտղության *գույգերի* դեպքում կանանց միջին տարիքը 31 է, իսկ տղամարդկանցը՝ 36: Առաջնային անպտղության խմբում *կանանց* 33,3%-ը 20-29 տարեկան են, 33,4%-ը՝ 30-39, 33,3%-ը՝ 40-49 տարեկան: Առաջնային անպտղություն խմբում *տղամարդկանց* 23,8%-ը 20-29 տարեկան են, 71,4%-ը՝ 30-39 տարեկան, 4,8%՝ 40-54 տարեկան են: Երկրորդային անպտղության *գույգերի* դեպքում կանանց միջին տարիքը 34 է, տղամարդկանցը՝ 38: Երկրորդային անպտղության խմբում *կանանց* 36,9%-ը 20-29 տարեկան են, 35,6%-ը՝ 30-39, 27,5%-ը՝ 40-49 տարեկան: Երկրորդային անպտղության խմբում *տղամարդկանց* 18,1%-ը 20-29 տարեկան են, 38,1%-ը՝ 30-39 տարեկան, 43,8%-ը՝ 40-54 տարեկան
- Առաջնային անպտղություն ունեցող զույգերի 54%-ը քաղաքային բնակավայրերից են, իսկ 46%-ը՝ գյուղական: Երկրորդային անպտղություն ունեցող զույգերի 71%-ն է քաղաքային բնակավայրերից, իսկ 29%-ը՝ գյուղական: Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողների 74%-ն է քաղաքային բնակավայրերից, իսկ 26%-ը՝ գյուղական:
- Առաջնային անպտղություն ունեցող *զույգերի* 14,7-ական %-ը Երևանից են, Արարատից և Արմավիրից, 11,8%-ը Սյունիքից, 8,8-ական %-ը Արագածոտնից, Գեղարքունիքից, Շիրակից, իսկ 5,9-ական %-ը՝ Լոռուց, Կոտայքից և Վայոց ձորից: Երկրորդային անպտղություն ունեցող զույգերի 39,2%-ը Երևանից են, 10,7%-ը՝ Արարատից, 10%-ը՝ Արմավիրից, 9,4%-ը՝ Շիրակից, 7,4%-ը՝ Լոռուց, իսկ մյուս մարզերում համեմատաբար քիչ են: Պտղաբեր համարվողների 34,2%-ը՝ Երևանից են, 9,6%-ը՝ Կոտայքից, 9,3%-ը՝ Արմավիրից, իսկ ամենաքիչը՝ 1,2%-ը՝ Վայոց ձորից: Ընդ որում՝ ըստ մարզերի դիտարկելիս՝ առաջնային անպտղությունը ավելի բարձր է Վայոց ձորի և Սյունիքի մարզերում, իսկ երկրորդայինը՝ Վայոց ձորի, Արարատի, Շիրակի մարզերում և Երևանում:
- Առաջնային անպտղություն ունեցող զույգերի կանանց 48%-ն ունեն թերի բարձրագույն և բարձրագույն կրթություն, մինչդեռ տղամարդկանց 24%-ն ունեն բարձրագույն կրթություն: Երկրորդային անպտղություն ունեցող զույգերի կանանց 43%-ն ունեն թերի բարձրագույն և բարձրագույն կրթություն, իսկ տղամարդկանց 37%-ն ունեն ունեն թերի բարձրագույն և բարձրագույն կրթություն:
- Պտղաբերության բոլոր խմբերում էլ կեսից ավելին ունեն զբաղվածություն և աշխատող տղամարդիկ ավելի շատ են, քան կանայք: Անպտղության առաջնային և երկրորդային խմբերում կանանց զբաղվածությունն ավելի մեծ է, քան պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողների խմբում: Մինչդեռ առաջնային անպտղություն ունեցող զույգերի մոտ տղամարդկանց զբաղվածությունն ավելի քիչ է (88%), քան պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողների խմբում:
- Առաջնային և երկրորդային անպտղություն ունեցող աշխատող կանանց կեսից ավելիի աշխատանքային պայմանները բավարար են: Բավարար են նաև առաջնային անպտղություն ունեցող զույգերի տղամարդկանց կեսից ավելիի աշխատանքային պայմանները, մինչդեռ երկրորդային անպտղություն ունեցող զույգերի տղամարդկանց կեսից ավելիի՝ 51%-ի, մոտ աշխատանքային պայմաններն անբավարար են: Տղամարդկանց աշխատանքային պայմաններն ավելի անբավարար են, քան կանանցը: Կանանց աշխատանքային անբավարար պայմաններն են հիմնականում հարկադիր դիրքով աշխատանքը, ֆիզիկական ծանրաբեռնվածությունը, մտավոր գերլարվածությունը և այլն (ըստ առաջնահերթության), մինչդեռ տղամարդկանց պարագայում դրանք են ֆիզիկական ծանրաբեռնվածությունը, մտավոր լարվածությունը, հարկադիր դիրքով աշխատանքը, տոքսիկ նյութերի հետ շփումը, ճառագայթվող միջավայրում աշխատանքը:
- Չույգերի մեծամասնությունը ապրում է սեփական բնակարանում: Չույգերի մեծամասնության բնակարանային պայմանները բավարար են, պետության կողմից

նպաստ չեն ստանում, ունեն վարկեր կամ այլ պարտքեր, ընտանիքի միջին ամսական եկամուտը կազմում է 150,000 դրամ և ավել:

- Տղամարդու դերը գույգի անպտղության խնդրում ավելի մեծ է երկրորդային անպտղության ժամանակ, քան առաջնայինի:
- Առաջնային անպտղություն ունեցողների շրջանում սեռական կամ դաշտանային ֆունկցիայի որոշակի խանգարումներ են նկատվում: Երկրորդային անպտղության վրա իրենց ազդեցությունն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են տարիքը, սթրեսները, ժամանակի ընթացքում ի հայտ եկած վարակները կամ բորբոքումները և այլն:
- Երկրորդային անպտղության վրա իրենց ազդեցությունը կարող են ունենալ նաև նախկին հղիությունների արհեստական ընդհատումների և/կամ ինքնաբեր վիժումների դեպքերը:
- Երկրորդային անպտղության առաջացման վրա ազդեցություն են ունենում նաև ձեռք բերված հիվանդություններն ու սեռավարակները, որոնք ավելի շուտ նպաստում են տղամարդկանց մոտ անպտղության առաջացմանը:

Ուսումնասիրության հիմնական բացահայտումները ներկայացված են ստորև.

- Երբևէ սեռական հարաբերություն ունեցած կին հարցվողների միջին տարիքը առաջին հարաբերության և առաջին ամուսնության ժամանակ գրեթե համընկնում են՝ 22 տարեկան: Իսկ տղամարդկանց 77%-ի դեպքում այդ տարիքները չեն համընկնում: Տղամարդկանց 1-ին հարաբերության միջին տարիքը եղել է 19, իսկ ամուսնության միջին տարիքը՝ 29 տարեկանը:
- Երբևէ դաշտան տեսած հարցվողների մեծամասնությունն առաջին անգամ դաշտան է տեսել 12-14 տարեկանում: Մեծամասնության մոտ դաշտանի տևողությունը 4-7 օր է, հաճախականությունը՝ ամիսը 1 անգամ, հիմնականում կանոնավոր, առատությունը՝ չափավոր, հիմնականում ոչ ցավոտ, երբեմն էլ ցավով ուղեկցվող:
- Տղամարդ հարցվողների մեծամասնությունը սեռական ֆունկցիայի խանգարում չունի: Նրանք, ովքեր ունեն, որպես սեռական ֆունկցիայի խանգարման պատճառներ նշում են՝ սեռավարակները և այլ հիվանդությունները, սթրեսը, հոգեբանական խնդիրները և այլն: 1-ին գիշերային սերմնաժայթքման հիմնական տարիքը 14-16-ն է. հարցվողների գրեթե կեսը չի ցանկացել այդ ֆիզիոլոգիական գործընթացի վերաբերյալ հարցին պատասխանել: Առավելագույն սեռական հարաբերությունների քանակը 1 ամսվա ընթացքում գրեթե կեսի մոտ տատանվում է 1-10անգամ միջակայքում, միջինում՝ 6 անգամ:
- Կին հարցվողների 95%-ը հղիացել է վերջին ամուսնության ժամանակ: Հարցման պահին հղի կանանց մեծ մասի հղիությունը պլանավորած է եղել, մյուսները, որոնց մոտ պլանավորած չի եղել, որոշել են պահպանել երեխային:
- Կին հարցվողների կեսից ավելին ունի և՛ արական, և՛ իգական սեռի երեխաներ, ¼-ը միայն արական, 16%-ը միայն իգական: Երեխաների միջին քանակը 2,48 է:
- Կանանց մեծ մասը կամ չեն պլանավորում երեխա ունենալ, կամ պլանավորում են, բայց ոչ մոտ ապագայում: Կանանց շրջանում երեխա ունենալ չցանկանալու հիմնական պատճառներն են տարիքը, ֆինանսական դժվարությունները, առողջական խնդիրները և այլն:
 - Տարիքը որպես երեխա ունենալ չցանկանալու պատճառ նշած հարցվողների մեծ մասը 85%-ը 40-49 տարեկան է:
 - Ֆինանսական դժվարությունները որպես երեխա ունենալ չցանկանալու պատճառ նշած հարցվողների 50%-ի մոտ ընտանիքի միջին ամսական եկամուտը կազմում է 150000 դրամ, 44%-ինը 150000-300000 դրամ, մնացած 6%-ինն ավելի բարձր է:
 - «Ունենք այնքան երեխա, որքան պլանավորել ենք» պատճառը նշած հարցվողների 48%-ն ունի 2 երեխա, 44%-ը՝ 3 երեխա, 7%՝ 4 երեխա, մնացածն՝ ավելի շատ:

կանանց կեսից ավելին՝ 56%-ը առաջին անգամ աբորտի են դիմել 25-35 տարեկան հասակում, 36,9%-ը՝ 19-24 տարեկանում: Հղիությունների դեպքերի ընդհատումների մեծամասնությունը տեղի է ունեցել մինչև 12 շաբաթական ժամկետում: Հղիության ընդհատման որոշում կայացրել են մեծամասամբ զույգերը միասին, 1/5 դեպքերում բժիշկն է որոշել, 1/5 դեպքում կինը ինքն է որոշել: Մեծամասամբ ամուսինները համաձայն են եղել հղիության ընդհատման հետ: Հղիության արհեստական ընդհատման դիմած կանայք իրենց ֆիզիկական վիճակն ավելի բարձր են գնահատել, քան հոգեբանականը: Հարցվողների համար հղիությունների արհեստական ընդհատումների տարածված դրդապատճառներն են առողջության/կյանքի համար վտանգավոր լինելը, նյութական դժվարությունները, ցանկալի քանակով երեխա ունենալը, ավելի ուշ երեխա պլանավորելը և այլն: Հղիության ընդհատման վերջին դեպքերը եղել են մեծամասամբ ծննդատանը/հիվանդանոցում և բժշկական հաստատություններում: Ընդհատումների շուրջ 92%-ը իրականացվել է մանկաբարձ-գինեկոլոգների կողմից, 5,7% դեպքերում կանայք ինքնուրույն են ընդհատել հղիությունը: Երբևէ հղիության արհեստական ընդհատման դիմած կանանց 52%-ը մինչև հղիության ընդհատումը ստացել է լիարժեք խորհրդատվություն ընդհատման հնարավոր հետևանքների վերաբերյալ, ընդ որում՝ նրանց 48,3%-ը այն կանայք են, որոնք ընդհատման դիմել են վերջին 5 տարիների ընթացքում: Երբևէ ընդհատում իրականացրած կանանց միայն 24,4%-ին է տրվել 3 օր սպասելաժամանակ՝ կրկին մտածելու և հղիության ընդհատման որոշումը փոխելու համար: Կանանց 54,4%-ը ցանկացել է երեխա ունենալ ընդհատումից հետո, սակայն փաստացի երեխա է ունեցել կամ այժմ հղի է 44,2%-ը:

- Տղամարդ հարցվողների պարագայում հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ տեղեկատվությունը գրեթե նույն է, ինչ կին հարցվողներից ստացված տեղեկատվությունը (նախորդ կետ), բացառություն է կազմում այն, որ ընդհատումից հետո կանանց և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական վիճակի վերաբերյալ տղամարդկանց գնահատականները միմյանցից շատ չեն տարբերվում, մինչդեռ երբ կանայք են գնահատում իրենք իրենց, այդ դեպքում ընդհատումից հետո հոգեբանորեն ավելի վատ վիճակում են եղել, քան ֆիզիկապես:
- Կին հարցվողների 50%-ը, իսկ տղամարդ հարցվողների 54%-ը երբեք չեն օգտագործել ժամանակակից բեղմնականխման միջոցներ, կին հարցվողների 38%-ը, իսկ տղամարդկանց 32%-ը նշել են, որ մշտապես օգտագործում են: Հարցվողների շրջանում ամենատարածված երբևէ օգտագործած բեղմնականխման միջոցներն են պահպանակը, ընդհատված սեռական հարաբերությունը, ներարգանդային պարույրը և այլն: Վերջին երկու տարիների ընթացքում առավել հաճախ կիրառված միջոցների դեպքում ամենատարածվածը պահպանական է, ապա՝ ընդհատված սեռական հարաբերությունը, ռիթմիկ կամ օրացույցային մեթոդը և այլն:
- Մարմնի կառուցվածքի և արտաքին ախտանշանների տեսանկյունից հարցվողների մեծամասնությունը նշում է, որ քաշի տատանումներ հիմնականում չեն ունեցել, սակայն արական սեռի ներկայացուցիչների մոտ նկատվում է նվազման միտում, մինչդեռ իգական սեռի մոտ՝ աճի միտում: Կին հարցվողների 17%-ը ունի աննշան կամ արտահայտված մազակալում մարմնի անսովոր հատվածներում: Վերջիններիս շուրջ կեսը ավելորդ մազակալումը նկատել է 25-40 տարեկան հասակում: 13% կին հարցվողների և 32% տղամարդ հարցվողների մոտ առկա է գլխի հատվածում մազաթափություն, որը մեծամասամբ նկատել են 25-40 տարեկանում: Կրծքագեղձի հետ կապված խնդիրներ առկա են հարցվող կանանց շուրջ 22%-ի մոտ, որոնք արտահայտվում են հիմնականում դաշտանից առաջ ցավերով, նորագոյացություններով, ուղղակի ցավերով և այլն:
- Կին հարցվողների մեծ մասը իրենց կամ իրենց ամուսիններին համարում են առողջ, նույն պատկերն է նաև տղամարդ հարցվողների մոտ, սակայն տղամարդ հարցվողների

շրջանում ավելի շատ են իրենց և իրենց կանանց առողջ համարողները, քան կին հարցվողների շրջանում:

- Ե՛վ կին, և՛ տղամարդ հարցվողների մեծամասնությունը չեն ունեցել միզասեռական և ներզատական համակարգի խնդիրներ, բայց կին հարցվողների մոտ ավելի շատ են հանդիպում միզասեռական խնդիրները, քան տղամարդ հարցվողների մոտ, ինչպես նաև ավելի շատ են հանդիպում միզասեռական, քան ներզատական համակարգի խնդիրներ: Ե՛վ կին, և՛ տղամարդ հարցվողների մեծամասնությունը սեռական օրգանների հետ կապված խնդիրներ չունի, սակայն նրանց շրջանում սեռական օրգանների հետ կապված ամենատարածված խնդիրը սեռական օրգանների շրջանում քորը կամ տհաճ արտադրությունն է, որից հետո սեռական օրգանների բորբոքային հիվանդությունները: Կին հարցվողների և իրենց ամուսինների գերակշիռ մեծամասնությունը չունեն հիվանդություններ, սակայն ունեցողների մոտ ամենատարածվածը սեռական օրգանների մաշկի սնկային ախտահարումն է, որից հետո գարդներելիոզը: Տղամարդ հարցվողների շրջանում առավել տարածված է սեռական օրգանների մաշկի սնկային ախտահարումը, հեպատիտը և այլն:
- Հարցվողների մեծամասնությունը՝ 87%-ը նշել է, որ երբևէ չի ունեցել երեխա ունենալու հետ կապված դժվարություններ, 6% նախկինում ունեցել և ապաքինվել է, 6%-ը՝ երբևէ ունեցել է: Հարցվողների կեսից ավելին՝ 74%-ը իր կնոջ/ամուսնու հետ միասին դիմել են բժշկի, 11%-ի դեպքում միայն կինն է դիմել, 15%-ի դեպքում ոչ ոք չի դիմել: Բժշկի չդիմելու հիմնական պատճառներն են՝ առանց բուժման հղիանալուն սպասելը, ամուսնու մոտ խնդրի բացակայությունը, կյուբակյան դժվարությունները, ամուսնու խուսափելը, բժիշկներին չվստահելը և այլն: Մեծամասնությունը հիմնականում դիմել են մասնագիտացված կենտրոն, մարզկենտրոնի ծննդատուն: Կին հարցվողների կեսից ավելիի մոտ կատարվել են անհրաժեշտ բոլոր հետազոտությունները, մինչդեռ նրանց ամուսինների կեսից ավելիի (74,8%) մոտ կատարվել են սերմի հետազոտություն, իսկ մյուս հետազոտությունները արվել են կեսից պակասի մոտ: Ըստ կին հարցվողների կեսից ավելիի՝ անպտղության պատճառը հայտնաբերվել է իրենց մոտ: Տղամարդ հարցվողների կեսից ավելիի դեպքում անհրաժեշտ հետազոտություններից արվել են միայն սերմի հետազոտությունը (79% դեպքերում) և արյան մեջ հորմոնների քանակի հետազոտությունը (52% դեպքերում), մյուս բոլոր հետազոտություններն արվել են ավելի քիչ դեպքերում: Ըստ տղամարդ հարցվողների 37%-ի պատճառը հայտնաբերվել է իրենց կանանց մոտ: Կին հարցվողների 10%-ը պտղաբերությունը վերականգնելու նպատակով վիրահատվել է, իսկ տղամարդ հարցվողների շրջանում ընդամենը 5%-ն է նշում վիրահատվելու մասին, ավելին՝ տղամարդ հարցվողների 13%-ը փաստում է, որ իրկինն է վիրահատվել, հետևաբար կանայք ավելի շատ են վիրահատվում, քան տղամարդիկ:
- Կին հարցվողների գերակշիռ մեծամասնությունը ընդամենը լսել է պտղաբերության վերականգնման նպատակով ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաների մասին: Հարցվողների 6-ական % օգտվել են համապատասխանաբար արտամարմնային բեղմնավորում և արհեստական սերմնավորում ամուսնու սերմնաբջիջով, սակայն արդյունքի չեն հասել: Տղամարդ հարցվողների պարագայում նույնպես մեծամասնությունը երբեք չի օգտվել ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաներից: Որոշները օգտվել են արտամարմնային բեղմնավորում (ԱՄԲ/ՅՈ) տեխնոլոգիայից (6%), արհեստական սերմնավորում ամուսնու սերմնաբջիջներով (4%) և արդյունքի չեն հասել, բայց նրանցից ավելի քիչ թվով հարցվողներ օգտվել են նույն տեխնոլոգիաներից և գոհ են (արդյունքի հասել են օգտվողների համապատասխանաբար 2% և 5%-ը):
- Կին հարցվողների գերակշիռ մեծամասնությունը հիմնականում *համամիտ է* «Եթե զույգերը չեն կարողանում երեխա ունենալ, նրանք պետք է դիմեն պտղաբերության ժամանակակից մեթոդներին» դատողության հետ (96%), շուրջ կեսը հիմնականում *համամիտ է* «Եթե կինը ցանկանում է երեխա ունենալ և չունի զուգընկեր, նա պետք է

երեխա ունենա բնական ճանապարհով՝ որևէ տղամարդուց» պնդման հետ (54%): Տղամարդ հարցվողների մեծամասնությունը հիմնականում *համամիտ է* «Եթե զույգերը չեն կարողանում երեխա ունենալ, նրանք պետք է դիմեն պտղաբերության ժամանակակից մեթոդներին» դատողությանը (79%), իսկ հիմնականում *համամիտ չեն* «Եթե կինը ցանկանում է երեխա ունենալ և չունի զուգընկեր, նա պետք է երեխա ունենա բնական ճանապարհով՝ որևէ տղամարդուց» դատողության հետ (51%):

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա արված հիմնական առաջարկներն են՝

Մշակել բազմաուղորտային ռազմավարություններ, որոնց շրջանակներում միջոցառումներ և քայլեր ձեռնարկել հայաստանյան ընտանիքներում իրենց ցանկացած թվով երեխաներ ունենալը հնարավոր դարձնելու համար:

Իրականացնել պետական միջամտություն, որպեսզի հնարավոր լինի բարելավել Հայաստանում ժողովրդագրական իրավիճակը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հղիությունների արհեստական ընդհատումները կիրառվում են որպես ընտանիքի պլանավորման մեթոդ, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել առողջ ու գրագետ սեռական վարքագիծ վարելու, անցանկալի հղիություններից խուսափելու և յուրաքանչյուր հղիության ցանկալի լինելու վերաբերյալ բնակչությանը, հատկապես երիտասարդներին կրթելու ուղղությամբ:

Բարձրացնել կանանց և տղամարդկանց իրազեկվածությունը ժամանակակից բեղմնականիման միջոցների արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև հղիությունների ինքնուրույն ընդհատումների բացասական հետևանքների վերաբերյալ:

Անպտղության կանխարգելման նպատակով վերարտադրողական տարիքի կանանց և տղամարդկանց հնարավորություն ընձեռնել հետազոտություններ և համապատասխան բուժում ստանալ պետական պատվերի շրջանակներում:

Խրախուսել զույգերին դիմելու և/կամ օգտվելու պտղաբերության վերականգնման ծառայություններից: Դրանց արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հնարավորություն ստեղծել, որպեսզի հղիանալ ցանկացող զույգը կարողանա ծառայությունից պետական պատվերի շրջանակներում օգտվել մի քանի անգամ՝ մինչև ցանկալի հղիության հասնելը:

ՄԱՍ 1. Բանակական հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության նպատակ

Հետազոտության նպատակն է եղել պարզել անպտղության տարածվածությունը Հայաստանի Հանրապետության վերարտադրողական տարիքի բնակչության շրջանում:

Հետազոտության օբյեկտ և առարկա

Հետազոտության օբյեկտ են հանդիսացել ՀՀ-ում բնակվող վերարտադրողական տարիքի անձիք (15-49 տարեկան իգական սեռի ներկայացուցիչները և 15-54 տարեկան արական սեռի ներկայացուցիչները)՝ անկախ այն հանգամանքից երբևէ ունեցել են սեռական հարաբերություն, թե ոչ:

Հետազոտության առարկան եղել է անպտղությունը:

Հիմնական հասկացությունների սահմանումներ

Հետազոտության ընթացքում կիրառվել են Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության անպտղության կլինիկական սահմանումները՝ հաշվի առնելով համաշխարհային մակարդակներում համեմատելի տվյալներ ստանալու անհրաժեշտությունը և ազգային առանձնահատկությունները:

Անպտղություն. Անպտղությունը՝ տղամարդկանց կամ կանանց վերարտադրողական համակարգի հիվանդություն է, որի ժամանակ 12 կամ ավելի ամիսների ընթացքում կանոնավոր սեռական կյանքով ապրող և բեղմնականխման միջոցներ չօգտագործող զույգը փորձում է, բայց անկարող է հղիության հասնել և երեխա ունենալ:

Առաջնային անպտղություն. Եթե անպտուղ զույգը երբեք չի կարողացել հղիության հասնել, դասակարգվում է որպես առաջնային անպտղություն:

Երկրորդային անպտղություն. Եթե անպտուղ զույգը նախկինում առնվազն մեկ երեխա է ունեցել, բայց այլևս չի կարողանում ունենալ, կամ հղիացել է, սակայն կենսունակ երեխա չի ունեցել, դասակարգվում է որպես երկրորդային անպտղություն:

Վերարտադրողական տարիք. Վերարտադրողական տարիքը կանանց համար սահմանվում է 15-49 տարեկանը, իսկ տղամարդկանց համար՝ 15-54 տարեկանը:

Հետազոտության մեթոդ

Ուսումնասիրության հիմնական մեթոդն է եղել դեմ առ դեմ ստանդարտացված հարցազրույցը՝ մեծամասամբ փակ հարցերով հարցաշարերի կիրառությամբ: Հարցազրույցներն իրականացվել են համակարգչային տեխնիկայի կիրառությամբ՝ CAPI-ի ծրագրի միջոցով⁶: Հետազոտության արդյունքները վերլուծվել են վիճակագրական SPSS ծրագրի միջոցով:

⁶ Computer-assisted personal interviewing՝ կիրառման ժամանակ, հարցազրույցավարը հարցվողի հետ դեմ առ դեմ հարցազրույցի ժամանակ ստացված տեղեկատվությունը մուտքագրում է համակարգչում(планшет) տեղադրված

Չետագոտության խնդիրներ

Չետագոտության սահմանված նպատակին հասնելու համար անդրադարձ է կատարվել ներքոնշյալ խնդիրների վերաբերյալ հարցադրումներին.

1. Սոցիալ-ժողովրդագրական բնութագրեր
2. Սեռական կյանք և ամուսնություն
3. Դաշտանային ցիկլի բնույթ
4. Խաթարված սեռական ֆունկցիա, մարմնասեռական զարգացման առանձնահատկություններ
5. Երեխաներ ունենալու ցանկություն և ունակություն
6. Հղիությունների ելքերի պարզաբանում
7. Անձնական փորձ ու կարծիք աբորտների վերաբերյալ
8. Անձնական փորձ ու կարծիք բեղմնականիման միջոցների վերաբերյալ
9. Մարմնի կառուցվածքի և հիվանդությունների արտաքին ախտանշանների ինքնագնահատում
10. Առողջական վիճակ, հիվանդությունների ախտանշաններ և պատմություն
11. Առաջնային բուժօգնության, տեղեկատվության և ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաների հասանելիությունը ներկայում կամ նախկինում անպտղություն ունեցող զույգերի համար
12. Կենսագործունեության պայմաններ
13. Անպտղության տարածվածությունը և խմբերի բնութագրություններ:

Չետագոտության ընտրանք

Համաձայն Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի 2020 թվականի տվյալների⁷ ՀՀ-ում 15-49 տարեկան իգական սեռի ներկայացուցիչների քանակը կազմում է 745017, իսկ 15-54 տարեկան արական սեռի ներկայացուցիչներինը՝ 762553: Ընդհանուր գլխավոր համախմբությունը տվյալ հետագոտության համար կազմել է 1507570:

1,8% ընտրանքային սխալի և 95,15 % վստահության միջակայքի դեպքում վիճակագրական բանաձևերի միջոցով հաշվարկված ընտրանքի ծավալը կազմել է 3000: Ընտրանքի ծավալը բաշխվել է Երևանում և ՀՀ 10 մարզերում բնակչության թվին համամասնորեն (Աղյուսակ 1):

Նախապես ծրագրավորված էլեկտրոնային հարցաթերթում: Ծրագիրը թույլ է տալիս ապահովել իրականացվող հարցազրույցների վերահսկողության բարձր մակարդակ:

⁷ <https://www.armstat.am/am/?nid=209>

Կազմվել է քլաստերային, քվոտային ընտրանք: Յուրաքանչյուր մարզի համար հաշվարկված ընտրանքի մեծությունը բաժանվել է քլաստերի մեծությանը և հաշվարկվել, թե որ մարզում քանի քլաստեր պետք է ընտրվի: Քլաստերների մեծությունը տվյալ հետազոտությունում 16 է: Յուրաքանչյուր մարզում բնակավայրերի/հարցման կետերի ընտրության համար, որպես ընտրանքի հիմք, հանդիսացել է տվյալ մարզի ընտրատեղամասերի ցուցակը: Ցուցակից համակարգված քայլի միջոցով ընտրվել են ընտրատեղամասերը: Ընտրված ընտրատեղամասերը հանդիսացել են քլաստերների սկզբնակետեր: Երևանի հարցումների քանակը համամասնորեն բաշխվել է ըստ վարչական շրջանների, որից հետո ընտրատեղամասերի ցուցակից ընտրվել են սկզբնակետերը՝ համապատասխան կլաստերների քանակին:

Աղյուսակ 1. Հարցվողների և քլաստերների բաշխումն ըստ մարզի			
Մարզ	Քանակ	Տոկոս	Քլաստերների քանակ
Երևան	1064	36%	66,5
Արագածոտն	128	4%	8
Արարատ	256	9%	16
Արմավիր	288	9%	18
Գեղարքունիք	240	8%	15
Լոռի	208	7%	13
Կոտայք	256	8%	16
Շիրակ	240	8%	15
Սյունիք	144	5%	9
Վայոց ձոր	48	2%	3
Տավուշ	128	4%	8
Ընդամենը	3000	100%	187,5

Յուրաքանչյուր մարզում ընտրանքը բաշխվել է համապատասխան թվով քվոտաների: Յուրաքանչյուր քվոտայի համար հաշվարկվել է, թե որ սեռա-տարիքային խմբից քանի մարդ պետք է հարցման ենթարկվի: Արդյունքում՝ ապահովվել է ընտրանքի ներկայացուցչականությունը:

Կլաստերի ներսում կոնկրետ ուղղությամբ գտնվող տնտեսությունը համարվել է առաջին տնտեսությունը, որից էլ սկսելվել են հարցումները: Եթե տնտեսությունում իրականացվել է անհրաժեշտ քվոտային համապատասխան հարցումը, 4 տնտեսություն բաց թողնվել և փորձել է կատարվել հարցում իրականացնել 5-րդ տնտեսությունում, իսկ եթե չի իրականացվել, ընտրվել է անմիջապես հաջորդ տնտեսությունը: Ընտրանքի ձևավորման բոլոր փուլերում ձեռնարկվել են միջոցներ, որոնք թույլ են տվել առավելագույնս ապահովել ընտրանքի ներկայացուցչականությունը:

Հետազոտության իրականացում և վերահսկողություն

Նախքան դաշտային աշխատանքները՝ ծրագրում ներգրավված փորձագետների (բժիշկների և սոցիոլոգների) կողմից մշակվել և պատվիրատու կազմակերպությանը՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակին են ներկայացվել ուսումնասիրության գործիքները: Հարցաթերթերը քննարկվել են նաև Առողջապահության նախարարության ներկայացուցիչների հետ:

Հարցաթերթերի հաստատումից հետո դրանք ներմուծվել են համապատասխան ծրագրում և փորձարկում անցնելով՝ նախապատրաստվել կիրառության:

Դաշտային աշխատանքների նախապատրաստական փուլում հարցազրուցավարները, դաշտային համակարգողները և որակի ստուգողը անցել են հատուկ վերապատրաստում ուսումնասիրության բովանդակության, հարցաթերթի և ընտրանքի վերաբերյալ: Վերապատրաստումներին մասնակցել են նաև բժիշկ փորձագետները՝ մասնագիտական նրբություններին ծանոթացնելու համար:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են համակարգչային տեխնիկայի կիրառությամբ, ինչի շնորհիվ ապահովվել է դաշտային աշխատանքների վերահսկողության բավականին բարձր մակարդակ: Կիրառվել են նաև CAPI ծրագրի ընձեռած վերահսկման բոլոր մեխանիզմները:

Հետազոտության արդյունքները, անցնելով տվյալների մշակման որոշակի ընթացակարգեր, վերլուծվել են SPSS վիճակագրական փաթեթի կիրառությամբ: Արդյունքներն ամփոփված են տվյալ գեկուլյցում:

ՄԱՍ 2.

Բաժին 1. Հարցվողների սոցիալ-ժողովրդագրական բնութագիր և կենսագործունեության պայմաններ

Ծանոթություն. այս բաժում ամփոփված տեղեկատվությունը վերաբերում է բոլոր հարցվողներին (n=3000)

Հարցումներն իրականացվել են ՀՀ բնակչության շրջանում բոլոր մարզերում շուրջ 3000 վերարտադրողական տարիքի անձանց հետ, որոնց 51%-ը եղել են տղամարդիկ, իսկ 49%-ը՝ կանայք (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Հարցվողների սեռ	Քանակ	Տոկոս
Արական	1532	51%
Իգական	1468	49%
Ընդամենը	3000	100%


Աղյուսակ 3. Հարցվողների բաշխումն ըստ մարզի	Քանակ	Տոկոս
Երևան	1064	36,4%
Արմավիր	288	9,4%
Կոտայք	256	8,5%

Արարատ	256	8,6%
Շիրակ	240	7,8%
Գեղարքունիք	240	7,6%
Լոռի	208	7,1%
Սյունիք	144	4,6%
Տավուշ	128	4,2%
Արագածոտն	128	4,2%
Վայոց ձոր	48	1,6%
Ընդամենը	3000	100,0%

Աղյուսակ 4. Հարցվողների տարիքը	Քանակ	Տոկոս
16-19 տարեկան	363	12%
20-24 տարեկան	353	12%
25-29 տարեկան	456	15%
30-34 տարեկան	515	17%
35-39 տարեկան	461	15%
40-44 տարեկան	383	13%
45-49 տարեկան	318	11%
50-54 տարեկան	151	5%
Ընդամենը	3000	100%


Հարցվողների կեսից ավելին ներկայումս ամուսնացած են կամ գտնվում են քաղաքացիական ամուսնության կարգավիճակում, իսկ շուրջ մեկ երրորդը երբեք ամուսնացած կամ քաղաքացիական կապի մեջ չեն եղել (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1.
Ամուսնական կարգավիճակ (n=3000)



Կանանց և տղամարդկանց ամուսնական կարգավիճակները (Գծապատկեր 2) դիտարկելու դեպքում պարզվում է, որ տղամարդ հարցվողների շուրջ 41%-ը, իսկ կին հարցվողների շուրջ 22%-ը երբեք ամուսնական կամ քաղաքացիական կապի մեջ չեն եղել: Վերջինս նշանակում է, որ երբեք չամուսնացած կամ քաղաքացիական միության մեջ չգտնվող տղամարդ հարցվողները գրեթե կրկնակի անգամ շատ են նույն կարգավիճակում գտնվող կանանցից:

Գծապատկեր 2. Ամուսնական կարգավիճակն ըստ կանանց և տղամարդկանց



Աղյուսակ 5. Դուք կամ Ձեր ամուսինը 5 տարուց ավել բնակվե՞լ եք արդյոք որևէ բնակավայրում, որի շրջակայքում առկա են հանքեր, քիմիական գործարաններ և այլն	Կին հարցվողներ	Տղամարդ հարցվողներ
Այո, ես	6,0%	8,0%
Այո, միայն ամուսինս (կինս)	1,7%	0,7%
Այո, երկուսս էլ	7,7%	7,3%
Ոչ	84,0%	83,4%
Դժվարանում եմ պատասխանել	0,6%	0,5%
Ընդամենը	100,0%	100,0%

Աղյուսակ 6. Հարցողների քաղաքացիությունը	Քանակ	Տոկոս
ՀՀ քաղաքացի	2886	96%
Այլ երկրի քաղաքացի	66	2%
Երկքաղաքացի (ներառյալ ՀՀ)	48	2%
Ընդամենը	3000	100%

Աղյուսակ 7. Եկեղեցիները, որոնց հետևում են հարցվողները	Կին		Տղամարդ		Ընդհանուր	
	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս
Հայ առաքելական եկեղեցի	1366	93%	1409	92%	2775	92,5%
Քրիստոնեական այլ ուղղություն (կաթոլիկ, բողոքական)	41	3%	30	2%	71	2,4%
Որևէ եկեղեցու հետևորդ չեմ (աթեիստ)	26	2%	27	2%	93	3,1%
Այլ կրոն	31	2%	62	4%	53	1,8%
Դժվարանում եմ պատասխանել	4	0%	4	0%	8	0,3%
Ընդամենը	1468	100%	1532	100%	3000	100,0 %

Աղյուսակ 8. Հարցվողների կրթությունը	Կին		Տղամարդ		Ընդհանուր	
	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս
Տարրական			1	0%	1	0%
Թերի միջնակարգ (8-ամյա)	97	7%	180	12%	277	9%
Միջնակարգ (10-12-ամյա)	557	38%	652	43%	1209	40%
Միջնակարգ մասնագիտական (տեխնիկում)	300	20%	219	14%	519	17%
Թերի բարձրագույն	41	3%	43	3%	84	3%
Բարձրագույն (առանց մագիստրատուրայի)	269	18%	285	19%	554	18%
Բարձրագույն (ներառյալ մագիստրատուրա)	188	13%	136	9%	324	11%
Հետբուհական (գիտական աստիճան)	16	1%	16	1%	32	1%
Ընդամենը	1468	100%	1532	100%	3000	100%

Հետաքրքրական է, որ կին հարցվողների կեսից ավելին՝ շուրջ 54%-ը չեն աշխատում, իսկ մյուսները աշխատում են հիմնականում սպասարկման և առևտրի, կրթական, առողջապահական և այլ ոլորտներում, մինչդեռ չի աշխատում տղամարդ հարցվողների շուրջ մեկ քառորդը, իսկ մնացածն աշխատում են հիմնականում սպասարկման և առևտրի, շինարարության և ճարտարագիտության, գյուղատնտեսության, պաշտպանության և այլ ոլորտներում (Աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Կանանց և տղամարդկանց զբաղվածության ոլորտները			
Կանանց զբաղվածության ոլորտները	Տոկոս	Տղամարդկանց զբաղվածության ոլորտները	Տոկոս
Սպասարկում և առևտուր	14,4%	Սպասարկում և առևտուր	17,0%
Կրթական ոլորտ	10,5%	Շինարարության և ճարտարագիտության ոլորտ	10,8%
Առողջապահական ոլորտ	5,4%	Գյուղատնտեսություն	9,1%
Վերամշակող արդյունաբերություն	2,9%	Պաշտպանություն և այլ ուժային կառույցներ, իրավապահ համակարգ (բանակ)	8,8%

Գյուղատնտեսություն	2,5%	Տրանսպորտի շահագործման ոլորտ	4,3%
Տնտեսագիտության և կառավարման ոլորտ	2,3%	Տեղեկատվական և հաշվողական տեխնիկա	3,4%
Տեղեկատվական և հաշվողական տեխնիկա	1,6%	Վերամշակող արդյունաբերություն	3,2%
Պաշտպանություն և այլ ուժային կառույցներ, իրավապահ համակարգ (բանակ)	1,5%	Տնտեսագիտության և կառավարման ոլորտ	2,5%
Հումանիտար-սոցիալական ոլորտ	1,4%	Հումանիտար-սոցիալական ոլորտ	2,3%
Մշակույթի ոլորտ	1,2%	Կրթական ոլորտ	2,2%
Տրանսպորտի շահագործման ոլորտ	0,3%	Մեքենաշինություն և կյուլթամշակություն	2,1%
Էլեկտրոնային տեխնիկա, ռադիոտեխնիկա և կապ	0,3%	Էներգետիկա և էներգամեքենաշինություն	1,7%
Էներգետիկա և էներգամեքենաշինություն	0,2%	Մշակույթի ոլորտ	1,6%
Դժվարանում եմ պատասխանել	0,2%	Առողջապահական ոլորտ	1,4%
Բնագիտական ոլորտ	0,2%	Այլ	1,2%
Բնապահպանության և բնօգտագործման ոլորտ	0,2%	Բնապահպանության և բնօգտագործման ոլորտ	1,1%
Հասարակություն կազմակերպություն /ՀԿ, Հիմնադրամ/	0,2%	Էլեկտրոնային տեխնիկա, ռադիոտեխնիկա և կապ	1,0%
Տուրիզմ	0,2%	Հրաժարվում եմ պատասխանել	0,6%
Շինարարության և ճարտարագիտության ոլորտ	0,1%	Բնագիտական ոլորտ	0,3%
Հրաժարվում եմ պատասխանել	0,1%	Դժվարանում եմ պատասխանել	0,3%
Մեքենաշինություն և կյուլթամշակություն	0,1%	Քիմիական տեխնոլոգիաների ոլորտ	0,2%
Քիմիական տեխնոլոգիաների ոլորտ	0,1%	Տուրիզմ	0,1%
Ոչ մի (չեմ աշխատում, զբաղվածություն չունեմ)	54,2%	Ոչ մի (չեմ աշխատում, զբաղվածություն չունեմ)	24,8%
Ընդամենը	100,0%	Ընդամենը	100,0%

Աղյուսակ 10. Կանանց և տղամարդկանց չաշխատելու հիմնական պատճառները			
Կանանց չաշխատելու հիմնական պատճառները	Տոկոս	Տղամարդկանց չաշխատելու հիմնական պատճառները	Տոկոս
Խնամում եմ երեխային/ծնողին/այլ	45%	Ուսանող եմ /աշակերտ եմ	35%
Ուսանող եմ /աշակերտ եմ	20%	Աշխատանք չեմ գտնում	24%
Աշխատանք չեմ գտնում	14%	Առողջական խնդիր ունեմ	13%
Ընտանիքի անդամը թույլ չի տալիս	6%	Կարիքը չունեմ/չեմ ցանկանում	8%
Կարիքը չունեմ/չեմ ցանկանում	5%	Այլ	6%
Առողջական խնդիր ունեմ	5%	Աշխատավարձերը ցածր են	5%
Այլ	2%	Խնամում եմ երեխային/ծնողին/այլ	0,3%
Աշխատավարձերը ցածր են	1%	Դժվարանում եմ պատասխանել	8%
Դժվարանում եմ պատասխանել	1%	Հրաժարվում եմ պատասխանել	1%
Հրաժարվում եմ պատասխանել	1%		

Ընդամենը	100%	Ընդամենը	100%
-----------------	-------------	-----------------	-------------

Աղյուսակ 11. Աշխատանքային պայմաններն ըստ կանանց և տղամարդկանց			
Աշխատանքային պայմաններն ըստ կանանց	Տոկոս	Աշխատանքային պայմաններն ըստ տղամարդկանց	Տոկոս
Բավարար պայմաններ, (վնասակար գործոնների բացակայություն)	39%	Բավարար պայմաններ, (վնասակար գործոնների բացակայություն)	36%
Աշխատանք հարկադիր դիրքով (նստած, կանգնած, այլ)	16%	Ֆիզիկական գերձանրաբեռնվածություն	19%
Մտավոր գերլարվածություն	13%	Մտավոր գերլարվածություն	10%
Ֆիզիկական գերձանրաբեռնվածություն	10%	Աշխատանք աղմկոտ միջավայրում	8%
Աշխատանք աղմկոտ միջավայրում	7%	Աշխատանք հարկադիր դիրքով (նստած, կանգնած, այլ)	8%
Աշխատանք ճառագայթվող միջավայրում	4%	Շփում տոքսիկ կյուլթերի հետ	4%
Շփում տոքսիկ կյուլթերի հետ	4%	Աշխատանք գերտաք միջավայրում	3%
Աշխատանք գերտաք միջավայրում	3%	Աշխատանք վիբրացիայի պայմաններում	3%
Այլ	3%	Այլ	3%
Աշխատանք գերսառը միջավայրում	1%	Աշխատանք ճառագայթվող միջավայրում	2%
Աշխատանք վիբրացիայի պայմաններում	0,3%	Աշխատանք գերսառը միջավայրում	2%
Հրաժարվում եմ պատասխանել	0,1%	Դժվարանում եմ պատասխանել	1%
		Հրաժարվում եմ պատասխանել	0,1%
Ընդամենը	100%	Ընդամենը	100%

Աղյուսակ 12. Ապրում եք Ձեր սեփական բնակարանում	Քանակ	Տոկոս
Այո, ապրում եմք մեր սեփական բնակարանում	2454	81,8%
Ոչ, ապրում եմք վարձակալած բնակարանում	390	13,0%
Ոչ, ապրում եմք բարեկամների տանը	126	4,2%
Ոչ, ապրում եմք հանրակացարանում	4	0,1%
Այլ	26	0,9%
Ընդամենը	3000	100,0%

Աղյուսակ 13. Բնակարանային պայմաններն ըստ հարցվողների	Կին		Տղամարդ		Ընդհանուր	
	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս
Գերազանց	267	18%	313	20%	580	19,3%
Բավարար	1041	71%	1113	73%	2154	71,8%
Անբավարար	159	11%	104	7%	263	8,8%

Դժվարանում եմ պատասխանել/Հրաժարվում եմ պատասխանել	1	0%	2	0%	3	0,1%
Ընդամենը	1468	100%	1532	100%	3000	100,0%

Աղյուսակ 14. Կարողանում եք ժամանակին կատարել կոմունալ վճարումները	Քանակ	Տոկոս
Այո, կարողանում եմ ժամանակին վճարել	2611	87%
Երբեմն ուշացնում եմ	348	12%
Միշտ ուշացնում եմ, նույնիսկ լինում եմ անջատումներ	25	1%
Դժվարանում եմ պատասխանել/Հրաժարվում եմ պատասխանել	16	1%
Ընդամենը	3000	100%

Աղյուսակ 15. Ունե՞ք վարկեր կամ այլ պարտքեր	Քանակ	Տոկոս
Այո	2021	67%
Ոչ	948	32%
Դժվարանում եմ պատասխանել/Հրաժարվում եմ պատասխանել	31	1%
Ընդամենը	3000	100%

Պետության կողմից նպաստ ստանում եք	Քանակ	Տոկոս
Այո, ստանում եմ	532	18%
Նախկինում ստացել եմ, բայց հիմա չեմ ստանում	348	12%
Երբեք չեմ ստացել	2102	70%
Դժվարանում եմ պատասխանել/Հրաժարվում եմ պատասխանել	18	1%
Ընդամենը	3000	100%

Աղյուսակ 16. Որքա՞ն է կազմում Ձեր ընտանիքի միջին ամսական եկամուտը	Կին հարցվողներ		Տղամարդ հարցվողներ		Ընդհանուր	
	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս
Մինչև 35,000 դրամ	52	4%	21	1%	73	2%
35,001 - 65,000 դրամ	129	9%	94	6%	223	7%
65,001 - 150,000 դրամ	456	31%	363	24%	819	27%
150,001 - 350,000 դրամ	580	40%	595	39%	1175	39%
350,001 – 600,000 դրամ	140	9%	232	15%	372	12%
600,001 դրամ և ավելի	34	2%	90	6%	124	4%
Դժվարանում եմ պատասխանել	63	4%	87	6%	150	5%
Հրաժարվում եմ պատասխանել	14	1%	50	3%	64	2%
Ընդամենը	1468	100%	1532	100%	3000	100%


Բաժին 2. Սեռական կյանք և ամուսնություն

Ծանոթություն. Այս բաժնում ամփոփված է այն հարցվողների վերաբերյալ տեղեկատվությունը, ովքեր երբևէ ունեցել են սեռական հարաբերություն (ամուսնացած, քաղաքացիական միության մեջ գտնվող, միայնակ մայր/հայր, այրի, ամուսնալուծված), և ներառված չեն երբեք հարաբերություններ չունեցած և չամուսնացած հարցվողները, (կին հարցվողներ՝ 1146, տղամարդ հարցվողներ՝ 909):

Աղյուսակ 17. Քանի՞ անգամ եք ամուսնացած եղել կամ համատեղ ապրել հակառակ սեռի ներկայացուցչի հետ	Կին հարցվողներ (n=1146)	Տղամարդ հարցվողներ (n=909)
1 անգամ	97%	96%
2 անգամ	3%	4%
3 և ավելի անգամ	1%	1%
Ընդամենը	100%	100%

Երբևէ սեռական հարաբերություն ունեցած կին հարցվողների միջին տարիքը առաջին հարաբերության ժամանակ եղել է 21,5 տարեկան, իսկ առաջին ամուսնության ժամանակ՝ 21,9 տարեկան: Կանանց առաջին սեռական հարաբերությունների և առաջին ամուսնության տարիքները հիմնականում համընկնում են (22 տարեկան), մինչդեռ տղամարդկանց 77%-ի դեպքում այն չի համընկնում: Տղամարդկանց առաջին սեռական հարաբերության միջին տարիքը եղել է 18,8 տարեկան, իսկ ամուսնության տարիքը՝ 28,7 տարեկան: Մինչև 18 տարեկանը սեռական հարաբերություն է ունեցել կին հարցվողների մոտ 4%-ը (մեծամասամբ 17 տարեկանում), իսկ տղամարդ հարցվողների՝ 30%-ը: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ, ի տարբերություն կանանց, տղամարդկանց 15%-ը դժվարացել է կամ հրաժարվել է պատասխանել առաջին սեռական հարաբերության տարիքի վերաբերյալ հարցին:

Գծապատկեր 3. Առաջին սեռական հարաբերության և առաջին ամուսնության տարիքներն ըստ սեռի



Ներկայումս ամուսնացած կամ քաղաքացիական միության մեջ է գտնվում և իրենց ամուսինների կամ զուգընկերների հետ միասին ապրում 987 կին հարցվող: Նրանց շուրջ 80%-ը նշում է, որ վերջին երկու տարիների ընթացքում ամեն ամիս ունեցել է սեռական հարաբերություն: Վերջիններիս մեծամասնությունը՝ շուրջ 80%-ը *«Սեռական հարաբերությունների ժամանակ ունենում եք արդյոք ցանկություն, թե անտարբեր եք և կենակցում եք ամուսնական պարտականությունները կատարելու համար»* հարցին պատասխանել է, որ հարաբերությունների ժամանակ ցանկություն է ունենում (միշտ՝ 63,8%, երբեմն՝ 23,5%), 6,4%-ը կենակցում են որպես ամուսնական պարտականություն, 0,6%-ը երեխա ունենալու համար, իսկ 5,8%-ը դժվարանում կամ հրաժարվում են պատասխանել ցանկության վերաբերյալ հարցին:

«Որքա՞ն հաճախ եք ամուսնու հետ սեռական հարաբերությունների ժամանակ ցավ զգում» հարցի դեպքում, 10 % կանայք նշում են, որ հարաբերությունները միշտ կամ հաճախ ուղեկցվում են ցավով, շուրջ 32%-ը՝ հազվադեպ է ցավ լինում, իսկ կեսից ավելին՝ մոտ 55%-ը, երբեք ցավ չի զգում:

«Որքա՞ն հաճախ եք ամուսնու հետ սեռական հարաբերությունների ժամանակ հաճույք զգում» հարցի պատասխանները վկայում են, որ հաճույք զգում են կին հարցվողների մոտ 77%-ը (միշտ կամ հաճախ), 13%-ը՝ հազվադեպ, 2,4%-ը երբեք, մյուսները հրաժարվում են խոսել նշված հարցի շուրջ:

«Վերջին երկու տարիների ընթացքում Ձեր կնոջ հետ ունեցե՞լ եք սեռական հարաբերություններ՝ առանց բեղմնականիման ժամանակակից կամ բնական միջոցների» հարցին ներկայումս ամուսնացած կամ քաղաքացիական միության մեջ գտնվող, իրենց կանանց կամ զուգընկերուհիների հետ միասին ապրող 858 **տղամարդ** հարցվողների շուրջ 70%-ը պատասխանում է, որ վերջին երկու տարիների ընթացքում իր կնոջ հետ ունեցել է սեռական հարաբերություն՝ առանց բեղմնականիման ժամանակակից կամ բնական միջոցների, 27%-ը չի ունեցել, իսկ 3%-ը դժվարանում է կամ հրաժարվում է հարցին պատասխանել:


«Ձեր կնոջ հետ սեռական հարաբերությունների ժամանակ ունենո՞ւմ եք արդյոք ցանկություն, թե անտարբեր եք և կենակցում եք ամուսնական պարտականությունները կատարելու համար» հարցին տղամարդկանց մեծամասնությունը՝ 91,6%-ը նշում է, որ հարաբերությունների ժամանակ ցանկություն է ունենում (միշտ՝ 85,1%, երբեմն՝ 6,4%), 2,3%-ը կենակցում են որպես ամուսնական պարտականություն, 0,8%-ը երեխա ունենալու համար, իսկ 5,3%-ը դժվարանում կամ հրաժարվում են պատասխանել:

«Երբևէ ունեցե՞լ եք սեռական թուլություն կամ անկարողություն» հարցին տղամարդկանց ընդամենը 2,7%-ն է նշում, որ շատ հաճախ կամ հաճախ ունենում են սեռական թուլություն կամ անկարողություն, 11,8%-ը նշում է հազվադեպ, իսկ 83,4%-ը երբեք չի ունեցել, 2,2%-ը հրաժարվում կամ դժվարանում է պատասխանել:

Բաժին 3. Դաշտանային ցիկլի բնույթ


Ծանոթություն. Այս բաժնում ամփոփված է բոլոր կին հարցվողների վերաբերյալ տեղեկատվությունն՝ անկախ ամուսնական կարգավիճակից (կին հարցվողներ՝ 1468):

Գծապատկեր 4. Դուք դաշտան տեսնում եք



Աղյուսակ 64. Կատարվել են Ձեզ մոտ հետևյալ հետազոտությունները	Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել
Սերմի հետազոտություն	79%	21%	
Արյան մեջ հորմոնների քանակի հետազոտություն	52%	43%	5%
Ամորձիների հյուսվածքների ուսումնասիրություն (բիոպսիա)	43%	52%	5%
Միզասեռական կամ պրոկտոլոգիական (վերջնաղիքային) հետազոտություն	31%	55%	13%
Փոշտի անոթների ջերմագրություն	30%	56%	14%
Դոպլերային էխոգրաֆիա	24%	67%	8%

Աղյուսակ 65. Կատարվել են Ձեր կնոջ մոտ հետևյալ հետազոտությունները	Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել
Գինեկոլոգիական ուսումնասիրություն	95%	2%	4%
Էխոգրաֆիա	89%	4%	6%
Արյան մեջ հորմոնների քանակի հետազոտություն	76%	11%	13%

Արգանդի խոռոչի լորձաթաղանթի ախտաբանական քերում	65%	15%	20%
Սեռավարակների վերաբերյալ հետազոտություններ	63%	25%	17%
Արգանդի խոռոչի դիտարկում (Հիստերոսկոպիա)	60%	16%	24%
Արգանդի և փողերի ռենտգենագրություն (Հիստերոսայլինգոգրաֆիա)	46%	28%	26%
Որովայնի խոռոչի օրգանների դիտարկում (Լապարոսկոպիա)	44%	28%	28%

Ըստ տղամարդ հարցվողների՝ անպտղության պատճառը հայտնաբերվել է միայն կնոջ մոտ (37%), միայն տղամարդու մոտ (21%), պատճառը մնացել է անհայտ (21%):

Աղյուսակ 66. Ու՛մ մոտ են հայտնաբերվել անպտղության պատճառները	Տոկոս
Պատճառը միայն իմ կնոջ մոտ է	37%
Պատճառը միայն ինձ մոտ է հայտնաբերվել	21%
Պատճառը մնացել է անհայտ	21%
Պատճառը երկուսիս մոտ էլ հայտնաբերվել է	19%
Դժվարանում եմ պատասխանել	2%

Համեմատության մեջ դիտարկենք Աղյուսակ 63-ի և Աղյուսակ 66-ի տվյալները: Անպտղության պատճառները միայն կանանց մոտ են հայտնաբերվել ըստ կին հարցվողների 56%-ի, իսկ տղամարդ հարցվողների 37%-ի, պատճառը միայն տղամարդու մոտ է հայտնաբերվել՝ ըստ կին հարցվողների 12%-ի, իսկ տղամարդ հարցվողների՝ 21%-ի, պատճառը 2-ի մոտ էլ հայտնաբերվել է՝ ըստ կին հարցվողների 15%-ի, իսկ տղամարդ հարցվողների՝ 19%-ի, պատճառը մնացել է անհայտ՝ ըստ կին հարցվողների 17%-ի, իսկ տղամարդ հարցվողների՝ 21%-ի:

Հաջորդ 4 աղյուսակներում ներկայացված են այն հիվանդությունները, որոնք հայտնաբերվել են հարցվողների և նրանց կանանց/ամուսինների մոտ:

Աղյուսակ 67. Հայտնաբերվել են Ձեզ մոտ հետևյալ խնդիրները (կին հարցվողներ)	Այո	Ոչ	Դժվ եմ պատ
Չվազատման խանգարում	45%	53%	2%
Պրոլակտինի բարձր ցուցանիշ արյան մեջ	23%	69%	8%
Հորմոնալ խնդիրներ՝ վահանազեղծի, մակերիկամի կամ այլ էնդոկրին գեղձերի հետ կապված	22%	77%	1%
Արգանդի պարանոցի Էրոզիա, ցերվիցիտներ, խողովակի նեղացում և այլ ախտաբանություն	19%	81%	
Արգանդի միոմա, լորձաթաղանթի պոլիպներ և այլ ախտաբանություն	17%	83%	
Չվարանների կիստաներ/ կիստոմաներ և այլ ախտաբանություն	17%	82%	1%
Արգանդափողերի միակողմանի կամ երկկողմ անանցանելիություն	14%	84%	1%
Սեռական համակարգի բնածին ախտաբանություն (արգանդի բացակայություն, մանկական արգանդ)	7%	92%	1%
Սեռավարակներ	3%	97%	
Էնդոմետրիոզ	6%	87%	7%
Կպումներ փոքր կոնքի խոռոչում	4%	94%	2%

Աղյուսակ 68. Հայտնաբերվել են Ձեր ամուսինների մոտ հետևյալ խնդիրները (կին հարցվողներ)	Այո	Ոչ	Դժվ եմ պատ
--	------------	-----------	-------------------


Էնդոկրին խանգարումներ	96%	4%	
Շարժունակ սպերմատոզոիդների բացակայություն	20%	76%	4%
Ոչ լիարժեք սերմ	16%	82%	3%
Շագանակագեղձի կամ այլ հավելյալ սեռական գեղձերի բորբոքումներ (սեռավարակներ)	9%	88%	3%
Սեռական ակտիվության թուլություն / բացակայություն (իմպոտենցիա)	7%	91%	2%
Սեռավարակներ	5%	91%	4%
Փոշոտի անոթների լայնացում (Վարիկոցելե)	3%	88%	9%
Սեռական համակարգի բնածին ախտաբանություն	2%	95%	3%

Աղյուսակ 69. Հայտնաբերվել են Ձեզ մոտ հետևյալ խնդիրները (տղամարդ հարցվողներ)	Այո	Ոչ	Դժվ եմ պատ
Սեռական համակարգի բնածին ախտաբանություն	1%	99%	
Ոչ լիարժեք սերմ	25%	75%	
Շարժունակ սպերմատոզոիդների բացակայություն	15%	78%	8%
Սեռական ակտիվության թուլություն / բացակայություն (իմպոտենցիա)	14%	86%	
Սեռավարակներ	11%	89%	
Շագանակագեղձի կամ այլ հավելյալ սեռական գեղձերի բորբոքումներ (սեռավարակներ)	9%	89%	2%
Էնդոկրին խանգարումներ	4%	96%	
Փոշոտի անոթների լայնացում (Վարիկոցելե)	3%	94%	2%


Աղյուսակ 70. Հայտնաբերվել են Ձեր կանանց մոտ հետևյալ խնդիրները (տղամարդ հարցվողներ)	Այո	Ոչ	Դժվ եմ պատ	Հրաժ եմ պատ
Ձվագատման խանգարում	30%	56%	13%	1%
Հորմոնալ խնդիրներ՝ վահանագեղձի, մակերիկամի կամ այլ Էնդոկրին գեղձերի հետ կապված	19%	72%	8%	1%
Արգանդի պարանոցի բրոզիա, ցերվիցիտներ, խողովակի նեղացում և այլ ախտաբանություն	15%	75%	8%	1%
Պրոլակտինի բարձր ցուցանիշ արյան մեջ	13%	75%	10%	1%
Արգանդափողերի միակողմանի կամ երկկողմ անանցանելիություն	12%	82%	5%	1%
Ձվարանների կիստաներ/ կիստոմաներ և այլ ախտաբանություն	12%	81%	6%	1%
Արգանդի միոմա, լորձաթաղանթի պոլիպներ և այլ ախտաբանություն	12%	79%	8%	1%
Սեռավարակներ	10%	86%	4%	1%
Էնդոմետրիոզ	3%	84%	11%	1%
Կպումներ փոքր կոնքի խոռոչում	3%	87%	8%	1%
Սեռական համակարգի բնածին ախտաբանություն (արգանդի բացակայություն, մանկական արգանդ)	2%	92%	4%	1%

Կին հարցվողների 10%-ը նշում է, որ պտղաբերությունը վերականգնելու նպատակով և կամ սեռական օրգանների հետ կապված վիրահատվել է (Գծապատկեր 48), իսկ տղամարդ հարցվողների շրջանում ընդամենը 5%-ն է նշում վիրահատվելու մասին, ավելին՝ տղամարդ հարցվողների 13%-ը փաստում են, որ իրենց կինն է վիրահատվել, հետևաբար կանայք ավելի շատ են վիրահատվում, քան տղամարդիկ:

Գծապատկեր 48. Պտղաբերությունը վերականգնելու նպատակով եւ կամ սեռական օրգանների խնդիրների հետ կապված վիրահատություն Դուք երբեւէ ունեցել եք (կին հարցվողներ)



Գծապատկեր 49. Պտղաբերությունը վերականգնելու նպատակով եւ կամ սեռական օրգանների խնդիրների հետ կապված վիրահատություն Դուք երբեւէ ունեցել եք (տղամարդ հարցվողներ)



Աղյուսակ 71-ում նկարագրված է, թե որքանով են բոլոր հարցված կանայք ծանոթ պտղաբերության վերականգնման նպատակով ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաներին, արդյոք երբևէ օգտվել են այդ տեխնոլոգիաներից, գոհ են արդյոք, թե ոչ: Գերակշիռ մեծամասնությունը ընդամենը լսել է այդ տեխնոլոգիաների մասին: Հարցվողների 6-ական %-ի մոտ կատարվել են համապատասխանաբար արտամարմնային բեղմնավորում և արհեստական սերմնավորում ամուսնու սերմնաբջիջով, սակայն արդյունքի չեն հասել:

Աղյուսակ 71. Ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաներ							
Անվանում	Լավ պատկերացնում եմ ինչ է, բայց չեմ օգտվել	Միայն լսել եմ, բայց չգիտեմ ինչ է դա, չեմ օգտվել	Երբեք չեմ լսել այդ մասին և չեմ օգտվել	Օգտվել եմ այդ տեխնոլոգիայից, արդյունքի չեմ հասել	Օգտվել եմ այդ տեխնոլոգիայից և գոհ եմ	ԴՊ	Պատրաստվում եմ օգտվել
Արհեստական սերմնավորում	62%	31%	5%		1%	1%	

դոնորի սերմնաբջիջներով							
Ձվաբջիջների դոնորություն	57%	32%	11%				
Արտամարմնային բեղմնավորում (ԱՄԲ/ՅՔՕ)	58%	31%	3%	6%	1%		2%
Արհեստական սերմնավորում ամուսնու սերմնաբջիջներով	58%	28%	6%	6%	3%		
Փոխնակ մայրություն	65%	30%	4%		1%		1%

Տղամարդ հարցվողների պարագայում նույնպես մեծամասնությունը երբեք չի օգտվել ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաներից: Որոշ տղամարդիկ նշել են, որ իրենք իրականացրել են արտամարմնային բեղմնավորում (ԱՄԲ/ՅՔՕ) (6%), արհեստական սերմնավորում ամուսնու սերմնաբջիջներով (4%) և արդյունքի չեն հասել, բայց նրանցից ավելի քիչ թվով հարցվողներ նշել են, որ օգտվել են նույն տեխնոլոգիաներից և գոհ են:

Աղյուսակ 72. Ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաներ

Անվանում	Միայն լսել են, բայց չգիտեմ ինչ է դա, չեմ օգտվել	Լավ պատկերացում են ինչ է, բայց չեմ օգտվել	Երբեք չեմ լսել այդ մասին և չեմ օգտվել	Օգտվել եմ այդ տեխնոլոգիայից, արդյունքի չեմ հասել	Օգտվել եմ այդ տեխնոլոգիայից և գոհ եմ	ԴՊ
Արհեստական սերմնավորում ամուսնու սերմնաբջիջներով	44%	42%	8%	4%	2%	
Արհեստական սերմնավորում դոնորի սերմնաբջիջներով	42%	50%	7%	1%		
Ձվաբջիջների դոնորություն	31%	46%	21%			2%
Արտամարմնային բեղմնավորում (ԱՄԲ/ՅՔՕ)	35%	41%	12%	6%	5%	1%
Փոխնակ մայրություն	43%	52%	5%			

Հարցվողների համար ընթերցվել են որոշակի դատողություններ⁸ և խնդրել, որպեսզի նրանք նշեն, թե որքանով են համամիտ հետևյալ պնդումների հետ: Արդյունքում կին հարցվողների գերակշիռ մեծամասնությունը հիմնականում համամիտ է «Եթե զույգերը չեն կարողանում երեխա ունենալ, նրանք պետք է դիմեն պտղաբերության ժամանակակից մեթոդներին» դատողության հետ (96%), շուրջ կեսը հիմնականում համամիտ է «Եթե կինը ցանկանում է երեխա ունենալ և չունի զուգընկեր, նա պետք է երեխա ունենա բնական ճանապարհով՝ որևէ տղամարդուց» պնդման հետ (54%):

Աղյուսակ 73. Որքանով եք համամիտ հետևյալ դատողությունների հետ (կին հարցվողներ)	Լիովին համամիտ եմ, որոշ չափով	Այդքան էլ համամիտ չեմ, բոլորովին համամիտ չեմ	ԴՊ, ԳՊ
--	--------------------------------------	---	---------------

⁸ Դատողությունների վերաբերյալ հարցերին պատասխանել են բոլոր հարցվողները:


	համամիտ եմ		
Եթե զույգերը չեն կարողանում երեխա ունենալ, նրանք պետք է դիմեն պտղաբերության ժամանակակից մեթոդներին	96%	3%	1%
Եթե տղամարդն ունի առողջական խնդիրներ, նորմալ է, որ իր կինը դոնորի միջոցով արհեստական հղիանա և, նրանք երեխա ունենան	79%	16%	5%
Եթե անհրաժեշտ լինի և ունենամ հնարավորություն, անպայման կդիմեմ պտղաբերության ժամանակակից մեթոդներին՝ երեխա ունենալու համար	76%	21%	3%
Եթե կինը ցանկանում է երեխա ունենալ և չունի զուգընկեր, նա պետք է երեխա ունենա պտղաբերության ժամանակակից մեթոդներով /Էկոյով	74%	22%	4%
Եթե կինը չունի զուգընկեր և ունի առողջական խնդիրներ, նորմալ է, որ նա դիմի փոխնակ մոր ծառայությանը և երեխա ունենա	71%	25%	4%
Եթե կինը ցանկանում է երեխա ունենալ և չունի զուգընկեր, նա պետք է երեխա ունենա բնական ճանապարհով՝ որևէ տղամարդուց	54%	41%	5%

Տղամարդ հարցվողների մեծամասնությունը հիմնականում համամիտ է «Եթե զույգերը չեն կարողանում երեխա ունենալ, նրանք պետք է դիմեն պտղաբերության ժամանակակից մեթոդներին» դատողությանը (79%), մյուս դատողությունների հետ համամիտ են տղամարդ հարցվողների շուրջ 55-56%-ը, իսկ այդքան էլ համամիտ չեն «Եթե կինը ցանկանում է երեխա ունենալ և չունի զուգընկեր, նա պետք է երեխա ունենա բնական ճանապարհով՝ որևէ տղամարդուց» դատողության հետ (51%):

Աղյուսակ 74. Որքանով եք համամիտ հետևյալ դատողությունների հետ (տղամարդ հարցվողներ)	Լիովին համամիտ եմ, որոշ չափով համամիտ եմ	Այդքան էլ համամիտ չեմ, բոլորովին համամիտ չեմ	ԴՊ , Յ Պ
Եթե զույգերը չեն կարողանում երեխա ունենալ, նրանք պետք է դիմեն պտղաբերության ժամանակակից մեթոդներին	79%	16%	5%
Եթե անհրաժեշտ լինի և ունենամ հնարավորություն, անպայման կդիմեմ պտղաբերության ժամանակակից մեթոդներին՝ երեխա ունենալու համար	58%	32%	10 %
Եթե կինը ցանկանում է երեխա ունենալ և չունի զուգընկեր, նա պետք է երեխա ունենա պտղաբերության ժամանակակից մեթոդներով /Էկոյով	56%	37%	7%
Եթե տղամարդն ունի առողջական խնդիրներ, նորմալ է, որ իր կինը դոնորի միջոցով արհեստական հղիանա և, նրանք երեխա ունենան	56%	37%	7%
Եթե կինը չունի զուգընկեր և ունի առողջական խնդիրներ, նորմալ է, որ նա դիմի փոխնակ մոր ծառայությանը և երեխա ունենա	55%	36%	10 %
Եթե կինը ցանկանում է երեխա ունենալ և չունի զուգընկեր, նա պետք է երեխա ունենա բնական ճանապարհով՝ որևէ տղամարդուց	41%	51%	8%

Հարցումների ընթացքում հարցվողներին տրվել է «Կցանկանալի՞ք անպտղության պատճառների պարզաբանման և պտղաբերության վերականգնելու նպատակով անվճար մասնագիտական խորհրդատվություն ստանալ» հարցը, որին և՛ խնդիրներ ունեցող կանանց, և՛ տղամարդկանց շուրջ 1/3-ը պատասխանել է՝ այո: Վերջիններս տրամադրվել է ծրագրի շրջանակում ներգրավված փորձագետ-բժիշկների հեռախոսահամարները, և արդյունքում շատերը կապ են հաստատել և իրենց հարցերին ստացել են սպառնիչ պատասխաններ:

Գծապատկեր 50. Կցանկանայի՞ք անպտղության պատճառների պարզաբանման և պտղաբերության վերականգնելու նպատակով անվճար մասնագիտական խորհրդատվություն ստանալ




ՄԱՍ 3.

Բաժին 12. Անպտղության տարածվածությունը

Ճանաչություն. Այս բաժնում ամփոփված է այն վերարտադրողական տարիքի հարցվողների վերաբերյալ տեղեկատվությունը, ովքեր ամուսնացած են կամ գտնվում են քաղաքացիական ամուսնության մեջ, ապրում են միասին

Անպտղության տարածվածությունը բնորոշելու համար առանձնացվել են հետևյալ խմբերը՝ առաջնային անպտղություն ունեցողներ, երկրորդային անպտղություն ունեցողներ, պտղաբերներ և ենթադրյալ պտղաբերներ, ինչպես նաև պտղաբերության անհայտ կարգավիճակ ունեցողներ:


Ըստ հարցման արդյունքների՝ վերարտադրողական տարիքի և միասին ապրող զույգերի շրջանում (թվով՝ 1845) անպտղության տարածվածությունը կազմում է 16,8%, պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողները կազմում են 74,2% (Գծապատկեր 51):



Այսպիսով՝ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ **առաջնային անպտղություն** ունի հարցվողների 1,7%-ը: Նրանք այն զույգերն են, որոնք 12 կամ ավելի ամիս կանոնավոր սեռական հարաբերություն են ունեցել, որոնց ընթացքում չեն կիրառել բեղմնականխման միջոցներ, սակայն կինը չի հղիացել:


Երկրորդային անպտղություն ունի հարցվողների 15,1%-ը: Նրանք այն զույգերն են, որոնք անցյալում ունեցել են առնվազն 1 երեխա, սակայն վերջին 12 կամ ավելի ամիս կանոնավոր, անպաշտպան սեռական հարաբերությունների պարագայում չեն հասել հղիության: Տվյալ խմբում են ներառված նաև այն զույգերը, որոնք 12 կամ ավելի ամիս կանոնավոր, անպաշտպան սեռական հարաբերությունների պարագայում չեն ունեցել կենսունակ երեխա՝ ինքնաբեր վիժման, չգարգացող հղիության կամ այլ պատճառներով: Տվյալ խումբը կոչել ենք չբերություն ունեցողներ, որոնք կազմել են 0,9% (Գծապատկեր 52):

Ըստ անպտղության համապատասխան խմբերի դիտարկելու դեպքում ստացվում է ներքոնշյալ պատկերը:




12.1. Պտղաբերության խմբերի սոցիալ-ժողովրդական բնութագրերը և կենսապայմանները կանանց և տղամարդկանց շրջանում

Ըստ հարցվողների սեռի դիտարկելու դեպքում, կին հարցվողների շրջանում⁹ (n=1146)՝ առաջնային անպտղությունը կազմում է 1,3%, երկրորդայինը՝ 13%, տղամարդ հարցվողների շրջանում (n=909) առաջնային անպտղությունը 2,2% է, երկրորդայինը՝ 17,6% (Գծապատկեր 53):




⁹ «Կին հարցվողների շրջանում» կամ «տղամարդ հարցվողների շրջանում» ձևակերպումն այս բաժնում կիրառվում է հաշվի առնելով կին կամ տղամարդ հարցվողների կողմից իրենց զույգի վերաբերյալ նշված տեղեկատվությունը:

Առաջնային անպտղության խմբում կանանց 33.3%-ը 20-29 տարեկան են, 33.4%-ը՝ 30-39, 33,3%-ը՝ 40-49 տարեկան: Երկրորդային անպտղության խմբում կանանց 36,9%-ը 20-29 տարեկան են, 35.6%-ը՝ 30-39, 27.5%-ը՝ 40-49 տարեկան (Գծապատկեր 54):




Առաջնային անպտղություն խմբում տղամարդկանց 23,8%-ը 20-29 տարեկան են, 71.4%-ը՝ 30-39 տարեկան, 4.8%՝ 40-54 տարեկան են: Երկրորդային անպտղության խմբում տղամարդկանց 18.1%-ը 20-29 տարեկան են, 38.1%-ը՝ 30-39 տարեկան, 43.8%-ը՝ 40-54 տարեկան (Գծապատկեր 55):




Եթե դիտարկենք առաջնային անպտղության զույգերի միջին տարիքները, ապա կանանց միջին տարիքը 30,6 է, տղամարդկանցը՝ 35,5, իսկ երկրորդային անպտղության զույգերի դեպքում կանանց միջին տարիքը 33,8 է, տղամարդկանցը՝ 37,8:

Առաջնային անպտղությունն ունեցող զույգերի 54%-ը քաղաքային բնակավայրերից են, իսկ 46%-ը՝ գյուղական: Երկրորդային անպտղությունն ունեցող զույգերի 71%-ն է քաղաքային բնակավայրերից, իսկ 29%-ը՝ գյուղական: Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողների 74%-ն է քաղաքային բնակավայրերից, իսկ 26%-ը՝ գյուղական (Գծապատկեր 56):



Առաջնային անպտղությունն ունեցող զույգերի 16%-ը, իսկ երկրորդային անպտղությունն ունեցողների 10%-ը նշում են, որ և՛ կինը, և՛ ամուսինը 5 տարուց ավել բնակվել են որևէ բնակավայրում, որի շրջակայքում առկա են եղել հանքեր, քիմիական գործարաններ կամ պոչամբարներ: Առաջնային անպտղությունն ունեցող զույգերի 2%-ի մոտ զույգերից միայն մեկն է նման բնակավայրում բնակվել, իսկ երկրորդային անպտղությունների 3%-ի դեպքում (Գծապատկեր 57):




Առաջնային անպտղություն ունեցող **զույգերի** 14,7-ական %-ը Երևանից են, Արարատից և Արմավիրից, 11,8%-ը Սյունիքից, 8,8-ական %-ը Արագածոտնից, Գեղարքունիքից, Շիրակից, իսկ 5,9-ական %-ը՝ Լոռուց, Կոտայքից և Վայոց ձորից: Երկրորդային անպտղություն ունեցող զույգերի 39,2%-ը Երևանից են, 10,7%-ը՝ Արարատից, 10%-ը՝ Արմավիրից, 9,4%-ը՝ Շիրակից, 7,4%-ը՝ Լոռուց, իսկ մյուս մարզերում համեմատաբար քիչ են: Պտղաբեր համարվողների 34,2%-ը՝ Երևանից են, 9,6%-ը՝ Կոտայքից, 9,3%-ը՝ Արմավիրից, իսկ ամենաքիչը՝ 1,2%-ը՝ Վայոց ձորից: Ընդ որում՝ ըստ մարզերի դիտարկելիս՝ առաջնային անպտղությունն ավելի բարձր է Վայոց ձորի և Սյունիքի մարզերում, իսկ երկրորդայինը՝ Վայոց ձորի, Արարատի, Շիրակի մարզերում և Երևանում:

Ստորև բերված Աղյուսակ 75-ում և 76-ում ներկայացված են խմբերի բաշխվածությունն՝ ըստ մարզերի (կին և տղամարդ հարցվողների շրջանում):

Աղյուսակ 75. Պտղաբերության խմբերի մարզային բաշխվածությունը. Կին հարցվողներ					
	Առաջնային անպտղություն	Երկրորդային անպտղություն	Պտղաբերության անհայտ կարգավիճակ	Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	Ընդամենը
Երևան	1,0%	16,7%	4,4%	77,9%	100,0%
Արագածոտն	0,0%	12,5%	6,3%	81,3%	100,0%
Արարատ	1,0%	14,0%	6,0%	79,0%	100,0%
Արմավիր	2,8%	10,2%	4,6%	82,4%	100,0%
Գեղարքունիք	0,0%	7,5%	5,4%	87,1%	100,0%
Լոռի	1,2%	11,0%	7,3%	80,5%	100,0%
Կոտայք	2,1%	10,5%	2,1%	85,3%	100,0%
Շիրակ	1,1%	12,5%	13,6%	72,7%	100,0%
Սյունիք	3,8%	13,5%	3,8%	78,8%	100,0%
Վայոց ձոր	0,0%	23,5%	11,8%	64,7%	100,0%
Տավուշ	0,0%	4,0%	4,0%	92,0%	100,0%
Աղյուսակ 76. Պտղաբերության խմբերի մարզային բաշխվածությունը. Տղամարդ հարցվողներ					
	Առաջնային անպտղություն	Երկրորդային անպտղություն	Պտղաբերության անհայտ կարգավիճակ	Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	Ընդամենը
Երևան	0,3%	17,3%	14,7%	67,8%	100,0%
Արագածոտն	8,8%	17,6%	8,8%	64,7%	100,0%
Արարատ	4,8%	22,9%	14,5%	57,8%	100,0%
Արմավիր	2,2%	22,0%	16,5%	59,3%	100,0%
Գեղարքունիք	4,0%	18,7%	6,7%	70,7%	100,0%
Լոռի	1,7%	23,3%	15,0%	60,0%	100,0%
Կոտայք	0,0%	10,5%	2,6%	86,8%	100,0%
Շիրակ	2,6%	23,1%	7,7%	66,7%	100,0%
Սյունիք	4,7%	4,7%	16,3%	74,4%	100,0%
Վայոց ձոր	12,5%	12,5%	25,0%	50,0%	100,0%
Տավուշ	0,0%	8,7%	4,3%	87,0%	100,0%


Անպտղության առաջնային և երկրորդային խմբերի հարցվողների գերակշիռ մեծամասնությունը հայ առաքելական եկեղեցու հետևորդներ են (Գծապատկեր 58): Առաջնային անպտղության խմբում հարցվողների 6%-ը եղել են աթեիստ, իսկ երկրորդային անպտղության խմբում նրանք եղել են 3%: Երկրորդային անպտղության և պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողների 1-ական տոկոսը եղել են այլ կրոնի հետևորդներ, երկրորդային

անպտղության խմբի 1%-ը և պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողների 3%-ը եղել են քրիստոնեական այլ ուղղության հետևորդներ:



Առաջնային անպտղության խմբում կին հարցվողների շուրջ կեսը՝ 50%-ն ունեն թերի բարձրագույն և բարձր կրթություն, մինչդեռ կին հարցվողների ամուսինների ընդամենը 14%-ն ունի բարձրագույն և բարձր կրթություն:

Երկրորդային անպտղության խմբում կին հարցվողների 42%-ն ունեն թերի բարձրագույն և բարձր կրթություն, մինչդեռ կին հարցվողների ամուսինների ընդամենը 36%-ն ունի թերի բարձրագույն և բարձր կրթություն (Գծապատկեր 59):



Առաջնային անպտղության խմբում տղամարդ հարցվողների 36%-ն ունեն բարձրագույն և բարձր կրթություն, մինչդեռ տղամարդ հարցվողների կանանց 45%-ն ունի բարձրագույն և բարձր կրթություն:

Երկրորդային անպտղության խմբում տղամարդ հարցվողների 38%-ն ունեն թերի բարձրագույն և բարձր կրթություն, մինչդեռ տղամարդ հարցվողների կանանց 45%-ն ունի թերի բարձրագույն և բարձր կրթություն (Գծապատկեր 60):




Հարցվողների և իրենց ամուսինների/կանանց կրթությունները ըստ պտղաբերության խմբերի դիտարկելիս պարզ է դառնում, որ առաջնային անպտղություն ունեցող զույգերի կանանց 48%-ն ունեն թերի բարձրագույն և բարձր կրթություն, մինչդեռ առաջնային անպտղություն ունեցող զույգերի տղամարդկանց 24%-ն ունեն բարձրագույն և բարձր կրթություն (Գծապատկեր 61):

Երկրորդային անպտղություն ունեցող զույգերի կանանց 43%-ն ունեն թերի բարձրագույն և բարձր կրթություն, մյուսներն ավելի ցածր, իսկ երկրորդային անպտղություն ունեցող զույգերի տղամարդկանց 37%-ն ունեն ունեն թերի բարձրագույն և բարձր կրթություն:


Այսպիսով, անպտուղ զույգերի դեպքում տղամարդկանց կրթության մակարդակն ցածր է կանանց կրթության մակարդակից՝ հաշվի առնելով այն, որ պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության խմբերում բարձրագույն և բարձր կրթություն ունեն և՛ կանանց, և՛ տղամարդկանց 35%-ը:

Գծապատկեր 61. Կրթության մակարդակը զույգերի շրջանում ըստ պտղաբերության խմբերի




Պտղաբերության բոլոր խմբերում էլ կեսից ավելի ունեն զբաղվածություն: Աշխատող տղամարդիկ ավելի շատ են, քան կանայք (Գծապատկեր 62): Անպտղության առաջնային և երկրորդային խմբերում կանանց զբաղվածությունն ավելի մեծ է (համապատասխանաբար 74% և 69%), քան պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողների խմբում (64%): Մինչդեռ առաջնային անպտղություն ունեցող զույգերի մոտ տղամարդկանց զբաղվածությունն ավելի քիչ է (88%), քան պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողների խմբում (94%):

Գծապատկեր 62. Չբաղվածությունը զույգերի շրջանում ըստ պտղաբերության խմբերի



Առաջնային և երկրորդային անպտղություն ունեցող աշխատող կանանց կեսից ավելիի աշխատանքային պայմանները բավարար են գնահատվել հարցվողների կողմից, նույնն է նաև առաջնային անպտղություն ունեցող զույգի տղամարդկանց պարագայում, մինչդեռ երկրորդային անպտղություն ունեցող զույգի տղամարդկանց կեսից ավելիի՝ 51%-ի, մոտ աշխատանքային պայմաններն անբավարար են (Գծապատկեր 63): Այնուհանդերձ, տղամարդկանց աշխատանքային պայմաններն ավելի անբավարար են, քան կանանցը:

Գծապատկեր 63. Աշխատանքային պայմանները զույգերի շրջանում ըստ պտղաբերության խմբերի





Անբավարար աշխատանքային պայմանները նշելիս հարցվողները հնարավորություն են ունեցել նշել մեկից ավել պայման: Արդյունքում անբավարար պայմաններն ըստ պատասխանների վերլուծելով՝ ստանում ենք ներքոնշյալ Աղյուսակում 77-ում ներկայացված բաշխումն, ըստ որի՝ առաջնային անպտղության խմբում կանանց աշխատանքային անբավարար պայմանների 79%-ը վերաբերում են աշխատանք հարկադիր դիրքով (28%), մտավոր գերլարվածություն (22%), ֆիզիկական գերձանրաբեռնվածություն (15%), աշխատանք աղմկոտ միջավայրում (14%) պայմաններին, երկրորդային անպտղության խմբի կանանց դեպքում պայմանների 70%-ը վերաբերում են ֆիզիկական գերձանրաբեռնվածություն (29%), աշխատանք հարկադիր դիրքով (24%), մտավոր գերլարվածություն (17%) պայմաններին:


Առաջնային անպտղության խմբի տղամարդկանց պարագայում պատասխանների 80%-ը վերաբերում է ֆիզիկական գերձանրաբեռնվածություն (39%), աշխատանք հարկադիր դիրքով (8%), մտավոր գերլարվածություն (8%), աշխատանք աղմկոտ միջավայրում (8%), շփում տոքսիկ նյութերի հետ (8%), աշխատանք ճառագայթվող միջավայրում (8%) պայմաններին, իսկ երկրորդային անպտղության խմբի տղամարդկանց դեպքում 66%-ն է վերաբերում ֆիզիկական գերձանրաբեռնվածություն (37%), մտավոր գերլարվածություն (10%) պայմաններին, աշխատանք աղմկոտ միջավայրում (10%), աշխատանք հարկադիր դիրքով (9%) պայմաններին:

Աղյուսակ 77. Աշխատանքային անբավարար պայմանների տարածվածությունը զույգերի շրջանում ըստ սեռի և պտղաբերության խմբերի												
	Աշխատանքային անբավարար պայմաններ	Աշխատանք հարկադիր դիրքով	Մտավոր գերլարվածություն	Ֆիզիկական գերձանրաբեռնվածություն	Շփում տոքսիկ նյութերի հետ	Աշխատանք աղմկոտ միջավայրում	Աշխատանք վիբրացիայի պայմաններում	Աշխատանք ճառագայթվող միջավայրում	Աշխատանք գերտաք միջավայրում	Աշխատանք գերսառը միջավայրում	Այլ	ՀՊ/ԴՊ
Կ ի ն	Առաջնային անպտղություն	28%	22%	15%	7%	14%	0%	7%	0%	0%	7%	0%
	Երկրորդային անպտղություն	24%	17%	29%	4%	7%	0%	7%	5%	2%	4%	0%
	Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	22%	21%	22%	6%	10%	1%	5%	5%	1%	4%	1%
Տ ու ա ռ դ	Առաջնային անպտղություն	8%	8%	39%	8%	8%	7%	8%	4%	4%	6%	0%
	Երկրորդային անպտղություն	9%	10%	37%	6%	10%	3%	4%	7%	3%	6%	4%
	Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	15%	12%	36%	8%	10%	3%	4%	5%	3%	3%	1%



Գծապատկեր 64-ից պարզ է դառնում, որ զույգերի մեծամասնությունը ապրում է սեփական բնակարանում: Բնակարանային պայմանները հարցվողների մեծամասնությունը գնահատում է բավարար (Գծապատկեր 65):



Ըստ Գծապատկեր 66-ի՝ տարբեր խմբերին պատկանող հարցվողների մեծամասնությունն ունեն վարկեր և պարտքեր, հետաքրքրական է, որ առաջնային անպտղություն ունեցող զույգերի շրջանում ավելի բարձր է վարկեր և պարտքեր ունեցողների տոկոսը (88%), քան մյուս խմբերում:



Ներկայացված խմբերի հարցվողների կեսից ավելիի ընտանիքի միջին ամսական եկամուտը 150,000 և ավել է (Գծապատկեր 67): Մեծամասնությունը պետության կողմից նպաստ չի ստանում (Գծապատկեր 68):




Այսպիսով՝ վերը ներկայացվեցին ՀՀ-ում զույգերի բաշխումն ըստ պտղաբերության առանձնացված խմբերի, նրանց սոցիալ-ժողովրդագրական և այլ բնութագրիչներ:

Բաժին 13. Անպտղության ֆիզիոլոգիական և այլ բնութագրիչներ

Իրականացված ուսումնասիրության ընթացքում պարզաբանվել են բազմաթիվ հարցեր, որոնք ընդհանուր հարցվողների առնչությամբ ներկայացված են սույն հաշվետվության առաջին մասում: Դրանք կարող են հանդիսանալ ներկայացված խմբերի բնութագրիչներ, անպտղության վրա ազդող գործոններ կամ որպես անպտղության հետևանք: Անրադառնանք դրանցից ամենակարևորներին:


13.1. Սեռական հարաբերություններ

Ուսումնասիրված կանանց շրջանում առաջնային անպտղության խմբում դասվողների 6,9%-ն ամուսնացել է 2 և ավելի անգամ, երկրորդային անպտղության խմբում 2 և ավելի անգամ ամուսնացածները համեմատաբար ավելի քիչ են և կազմում են 2,3%, իսկ պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողների մոտ այդ թիվը բավականին փոքր է, և այն կազմում է 1,9%:



Նմանատիպ պատկեր է նաև ստեղծվում այն դեպքում, երբ պարզում ենք ամուսինների/զուգընկերների ամուսնությունների թիվը: Պարզվում է, որ առաջնային անպտղության խմբում դասված կանանց ամուսինների 10,3%-ն ամուսնացել է 2 անգամ, երկրորդային խմբում նրանք կազմում են 4,6%, Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ խմբում՝ 3,2%: Ներկայացվածից կարելի է ենթադրել, որ ամուսնալուծությունների պատճառներում որոշակի դեր է ունեցել նաև զույգի անպտուղ լինելու հանգամանքը:

Ուսումնասիրված տղամարդկանց շրջանում առաջնային անպտղության խմբում դասվողների 4,8%-ն ամուսնացել է 2 և ավելի անգամ, երկրորդային անպտղության խմբում 2 և ավելի անգամ պատասխանը նշողներ չեն եղել, իսկ պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողների մոտ այդ թիվը բավականին փոքր է, և այն կազմում է 1,2%:




Ինչպես տեսնում ենք, անպտղության պատճառով ամուսնալուծությունների և/կամ կրկնակի ամուսնությունների տոկոսն ավելի բարձր է կանանց, քան տղամարդկանց շրջանում:


Այն հարցին, թե արդյոք հարաբերությունների ժամանակ կանայք ցանկություն ունենում են, թե հարաբերվում են նաև այլ պատճառով, պատասխաններում «կենսակցում եմ երեխա ունենալու համար» տարբերակն ավելի շատ նշվել է առաջնային անպտղություն ունեցող կանանց խմբում (3,6%): Համեմատության համար նշենք, որ այդ պատասխանը ընդհանրապես չի նշվել երկրորդային անպտղություն ունեցող կանանց խմբում, իսկ պտղաբերության կարգավիճակ ունեցող կանանց խմբում նշվել է 0,3% դեպքերում: Հակառակ դրան՝ «կենսակցում եմ որպես ամուսնական պարտականություն» տարբերակը չի նշվել առաջնային անպտղություն ունեցողների խմբում, երկրորդային անպտղություն ունեցողների խմբում դա նշվել է 3,8% դեպքերում, իսկ պտղաբերության կարգավիճակ ունեցողների խմբում՝ 6,4% դեպքերում:

Տղամարդ հարցվողների հետ տվյալ հարցի պատասխաններում գրեթե բացակայում է «կենսակցում եմ երեխա ունենալու համար» տարբերակը, այն նշվել է միայն պտղաբերության կարգավիճակ ունեցող տղամարդկանց 0,5%-ի կողմից: Տղամարդկանց խմբում նույնպես «կենսակցում եմ որպես ամուսնական պարտականություն» տարբերակը չի նշվել առաջնային անպտղություն ունեցողների խմբում:

Գծապատկեր 71-ում և Գծապատկեր 72-ում ներկայացված են, թե կանայք որքան հաճախ են սեռական հարաբերությունների ժամանակ ցավ և հաճույք զգում:




Գծապատկեր 72. Հարաբերությունների ընթացքում հաճույք զգալ (կին հարցվողներ)




Գծապատկեր 73–ում ներկայացված է, թե տղամարդիկ որքան հաճախ են սեռական հարաբերությունների ժամանակ ցավ զգում, իսկ Գծապատկեր 74-ում՝ թե որքան հաճախ են նրանց կանայք ցավ զգում՝ ըստ տղամարդկանց:

Գծապատկեր 73: Սեռական հարաբերության ժամանակ ցավ զգալ (տղամարդ հարցվողներ)



Գծապատկեր 74: Սեռական հարաբերության ժամանակ կնոջ կողմից ցավի զգացում (տղամարդ հարցվողներ)



Վերը ներկայացվածից երևում է, որ երկրորդային անպտղություն ունեցողներն ավելի շատ են ունենում ցավի զգացում, քան առաջնային անպտղություն ունեցողները, միևնույն ժամանակ առաջնային անպտղություն ունեցող կանայք սեռական հարաբերությունների ժամանակ ավելի շատ են ցավ զգում, սակայն դրա մասին ավելի քիչ են իմանում տղամարդիկ:

Տղամարդկանց տրվել է հարց, թե երբևէ ունեցել են սեռական թուլություն:

Աղյուսակ 78. Երբևէ ունեցել եք սեռական թուլություն	Շատ հաճախ	Հաճախ	Հազվադեպ	Երբեք	ԴՊ	ՀՊ
Առաջնային անպտղություն	0,0%	0,0%	28,6%	71,4%	0,0%	0,0%
Երկրորդային անպտղություն	0,6%	1,9%	13,5%	81,3%	0,0%	2,6%
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	0,2%	1,7%	11,9%	84,3%	0,5%	1,4%

Վերը ներկայացվածներից կարելի է ենթադրել, որ տղամարդու դերը զույգի անպտղության խնդրում ավելի մեծ է երկրորդային անպտղության ժամանակ, քան առաջնայինի:

13.2. Դաշտան և սեռական ֆունկցիա

Տղամարդ հարցվողներից պարզվել է, թե իրենց կարծիքով իրենք ունեն սեռական ֆունկցիայի խանգարումներ: Պատասխանները, ըստ խմբերի ներկայացված է ստորև՝ Աղյուսակ 79-ում:

Աղյուսակ 79. Արդյոք ունեք սեռական ֆունկցիայի խանգարումներ	Առաջնային անպտղություն	Երկրորդային անպտղություն	Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ
Ոչ, իմ սեռական ֆունկցիան նորմալ է	76,2%	94,8%	95,9%
Էրեկցիան հազվադեպ է լինում (առնանդամի կանգնումը)	0,0%	1,3%	0,9%
Առնանդամը չի կանգնում (իմպոտենցիա)	0,0%	0,0%	0,2%
Սերմնաժայթքումը լինում է շուտ	0,0%	0,6%	0,7%
Սերմնաժայթքումը լինում է դժվարությամբ	4,8%	0,6%	0,5%
ԴՊ	14,3%	1,9%	1,2%
ՀՊ	4,8%	0,6%	0,7%
Ընդամենը	100%	100%	100%

Այն տղամարդ հարցվողները, ովքեր նշել են, որ ունեն սեռական ֆունկցիայի խանգարում, պատասխանել են նաև պատճառները պարզող հարցին: Առաջնային անպտղություն ունեցողների խմբին պատկանող տղամարդ հարցվողները դա մեծապես պայմանավորել են հոգեբանական խնդիրների առկայությամբ, իսկ երկրորդային անպտղություն ունեցողները՝ սեռական օրգանների բորբոքմամբ և այլն:

Մեկ ամսվա ընթացքում սեռական հարաբերությունների առավելագույն չափը առաջնային անպտղության խմբում առանձնացված հարցվողների մոտ միջինում կազմել է 8, երկրորդայինի մոտ՝ 6, իսկ պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ ունեցողների մոտ՝ 4 անգամ:


Կանանց տրվել են մի շարք հարցեր, պարզելու համար նրանց դաշտային ֆունկցիայի վիճակը: Այսպիսով՝ առաջնային անպտղության խմբում առանձնացված կանայք բոլորն էլ ներկայումս դաշտան տեսնում են, իսկ երկրորդային անպտղության խմբում առանձնացված կանանց միայն 87.7%-ն է ներկայումս դաշտան տեսնում: Վերը արդեն իսկ ներկայացվել է, որ երկրորդային անպտղության կարգավիճակ ունեցող կանանց մի մասն արդեն իսկ մոտեցել է դաշտանադարի տարիքին, ինչը ցույց է տալիս նաև տվյալ հարցադրման պատասխանների բաշխումը: Այն հարցին, թե քանի օր է տևում դաշտանը, պատասխանները ներկայացված են Աղյուսակ 80-ում:

Աղյուսակ 80. Դաշտանի տևողությունն՝ ըստ խմբերի	1-3 օր	4-7 օր	8-10 օր	11 օրից ավել	ԴՊ	ՀՊ
Առաջնային անպտղություն	44,4%	55,6%	0,0%	0,0%	0,0%	0,0%
Երկրորդային անպտղություն	33,1%	62,9%	3,2%	0,8%	0,0%	0,0%
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	30,1%	65,9%	2,9%	0,0%	0,5%	0,5%

Դաշտանի հաճախականության հարցն ըստ խմբերի ներկայացված է Աղյուսակ 81-ում:

Աղյուսակ 81. Դաշտանի հաճախականությունը:	ամիսը 2 անգամ	ամիսը 1 անգամ	2-3 ամիսը մեկ անգամ	3-6 ամիսը մեկ անգամ	6-12 ամիսը մեկ անգամ	ԴՊ	ՀՊ
Առաջնային անպտղություն	7,4%	92,6%	0,0%	0,0%	0,0%	0,0 %	0,0%
Երկրորդային անպտղություն	0,0%	92,7%	4,8%	0,0%	1,6%	0,0 %	0,8%
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	1,9%	93,3%	3,2%	0,1%	0,1%	0,7 %	0,7%

Առաջնային անպտղություն ունեցող կանանց 64,3%-ն է փաստել, որ վերջին մեկ տարվա ընթացքում դաշտանը կանոնավոր է լինում, իսկ երկրորդային անպտղություն ունեցողների՝ 83,9%-ը:




Դաշտանի ցավոտ լինելու մասին ավելի շատ նշել են առաջնային անպտղություն ունեցող կանայք: Ցավոտ չլինելը հավաստում են ավելի շատ պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ և երկրորդային անպտղություն ունեցող կանայք:

Աղյուսակ 82. Կանայք արդյոք ցավ ունենում են դաշտանի ժամանակ՝ ըստ խմբերի.	Այո, միշտ ցավոտ է (անգամ ցավազրկող են օգտագործում)	Այո, երբեմն ցավոտ է	Ոչ, ցավոտ չէ	ԴՊ	ՀՊ
Առաջնային անպտղություն	34,5%	34,5%	31,0%	0,0%	0,0%
Երկրորդային անպտղություն	16,9%	31,5%	51,5%	0,0%	0,0%
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	18,6%	28,5%	51,7%	0,5%	0,6%


Վերը ներկայացվածը վկայում է առաջնային անպտղություն ունեցողների շրջանում սեռական կամ դաշտանային ֆունկցիայի որոշակի խանգարումների մասին: Կարելի է ենթադրել, որ առաջնային անպտղությունն ավելի շատ պայմանավորված է առողջական կամ ներքին գործոններով, իսկ երկրորդային անպտղությունը՝ արտաքին, որի մեջ նաև տարիք, սթրեսներ, վարակներ կամ բորբոքումներ և այլն:

13.3. Հղիությունների ելքերը և հղիությունների արհեստական ընդհատումների դեպքերը երկրորդային անպտղություն ունեցողների շրջանում

Ինչպես արդեն ներկայացվել է սահմանման մեջ, երկրորդային անպտղություն ունեցող կանայք իրենց կյանքի ընթացքում հասել են հղիության, իսկ տղամարդիկ հղիացրել են կանանց: Երկրորդային անպտղություն ունեցող հարցվողների 92,4%-ը նշել է, որ ունեն պլանավորվածից քիչ երեխաներ և պլանավորում են մոտ ապագայում երեխաներ ունենալ: Գծապատկեր 76-ում ներկայացված են հղիությունների ելքերը երկրորդային անպտղություն ունեցող կանանց մոտ:



Գծապատկեր 77-ում ներկայացված են հղիությունների ելքերը երկրորդային անպտղություն ունեցողների խմբում դասված տղամարդկանց կանանց մոտ:



Այն հարցին, թե արդյոք վերջին հղիության ընթացքում եղել են բարդություններ, հարցվողների մեծ մասը նշել է, որ լուրջ բարդություններ չեն առաջացել: Հետաքրքրական է, որ երկրորդային անպտղություն ունեցող կանանց 35,2%-ը, իսկ հարցված տղամարդկանց կանանց 26,6%-ն ունեցել են կեսարյան հատումներ: Այս խմբի հարցված կանանց 2,3%-ը նշել է, որ ունեցել են բնական արատով ծնված երեխաներ, սակայն երեխան մահացել է, իսկ տղամարդկանց 2,5%-ն է նշել այդ մասին:

Հղիությունների արհեստական ընդհատումների վերաբերյալ երկրորդային անպտղություն ունեցող կին հարցվողների 14,1%-ը նշել է, որ մեկ անգամ ունեցել է նման փորձ, 2-3 անգամ նշել է նրանց 7,8%-ը, 5-ից ավելի անգամ՝ 3,9%-ը, իսկ 0,8%-ը՝ 4-5 անգամ: Տղամարդիկ իրենց կանանց վերաբերյալ նշել են, որ 2-3 անգամ՝ 14,4%-ը, 1 անգամ՝ 7,2%-ը, 4-5 անգամ՝ 1,3%-ը, 5 անգամից ավելի՝ 0,7%-ը, իսկ 0,7%-ը հրաժարվել է հարցին պատասխանել: Ինքնուրույն վիժում առաջացնելու փորձ ունեցել են երկրորդային անպտղություն ունեցողների 14,7%-ը: Երկրորդային անպտղություն ունեցող կանանց 84,8%-ը մինչև առաջին ընդհատումը արդեն իսկ ունեցել են երեխա, իսկ տղամարդկանց 81,6%-ն է նշել, որ մինչև առաջին ընդհատումը կինն ունեցել է երեխա:

Երկրորդային անպտղություն ունեցող հարցվողների 60%-ը նշել է, որ հղիության արհեստական ընդհատումից հետո չեն ունեցել երեխա:

Այսպիսով՝ վերը ներկայացվածը վկայում է այն մասին, որ երկրորդային անպտղության վրա էական ազդեցություն կարող են ունենալ նախկին հղիությունների ելքերն ու հղիությունների ընդհատումների դեպքերը:

13.4. Առողջական վիճակ, հիվանդությունների արտաքին ախտանշանների ինքնագնահատում

Առողջության վիճակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով նախ պարզվել է հարցվողների սուբյեկտիվ գնահատականներն իրենց առողջության մասին: Հետաքրքրական է, որ առաջնային անպտղություն ունեցող հարցվողներն ամենաշատն են իրենց առողջ համարում:

Աղյուսակ 83. Դու Ձեզ առողջ համարում եք	Կին հարցվող			Տղամարդ հարցվող		
	Այո	Ոչ	ԴՊ	Այո	Ոչ	ԴՊ
Առաջնային անպտղություն	82,1%	17,9%	0,0%	95,2%	0,0%	4,8%
Երկրորդային անպտղություն	75,6%	22,9%	1,5%	83,2%	16,8%	0,0%
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	75,9%	22,0%	2,0%	83,8%	16,0%	0,2%

Ինչպես տեսնում են ստորև ներկայացված աղյուսակից, հարցվողներն իրենց հանդեպ ավելի քննադատական են, քան իրենց զուգընկերների հանդեպ՝ համարելով նրանց ավելի առողջ, քան իրենց:

Աղյուսակ 84. Դու Ձեր կնոջը /ամուսնուն առողջ համարում եք	Կին հարցվող			Տղամարդ հարցվող		
	Այո	Ոչ	ԴՊ	Այո	Ոչ	ԴՊ
Առաջնային անպտղություն	89,3%	10,7%	0,0%	100,0%	0,0%	0,0%
Երկրորդային անպտղություն	79,4%	19,8%	0,8%	85,2%	12,9%	1,9%
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	79,0%	19,9%	1,2%	84,5%	14,8%	0,7%

Արդյոք հարցվողներն ունեցել են միզասեռական և ներզատական համակարգերի խնդիրներ, ներկայացված է ստորև՝ Աղյուսակ 85-ում:

Աղյուսակ 85. Միզասեռական և ներզատական համակարգերի խնդիրների առկայություն հարցվողների մոտ								
Կին հարցվողներ								
		Նման խնդիր չունենալ/չեն ունեցել	Բուժում չեն ստացել, խնդիրները չեն անցել	Բուժում չեն ստացել, վիճակը բարելավվել է	Բուժում ստացել են, խնդիրները չեն անցել	Բուժում ստացել են, ապացիսվել են	Ներկայումս բուժման մեջ են	ԴՊ
Միզասեռական համակարգի խնդիրներ	Առաջնային անպտղություն	74,1%	0,0%	3,7%	0,0%	22,2%	0,0%	0,0%
	Երկրորդային անպտղություն	72,3%	2,3%	0,0%	2,3%	22,3%	0,8%	0,0%
	Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	65,8%	4,9%	1,9%	3,6%	22,4%	1,2%	0,3%
Ներզատական համակարգի խնդիրներ	Առաջնային անպտղություն	80,8%	7,7%	0,0%	0,0%	11,5%	0,0%	0,0%
	Երկրորդային անպտղություն	81,1%	0,8%	0,8%	0,0%	6,6%	9,8%	0,8%

	Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	82,7%	3,7%	0,1%	2,1%	4,1%	5,5%	1,7%
--	--	-------	------	------	------	------	------	------

Տղամարդ հարցվողների մոտ միզասեռական համակարգի խնդիրների առկայության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 86-ում:

Աղյուսակ 86. Միզասեռական համակարգի խնդիրների առկայությունը տղամարդկանց մոտ		Նման խնդիր չունեն/չեն ունեցել	Բուժում չեն ստացել, խնդիրները չեն անցել	Բուժում չեն ստացել, վիճակը բարելավվել է	Բուժում ստացել են, խնդիրները չեն անցել	Բուժում ստացել են, ապաքինվել են	Ներկայումս բուժման մեջ են	ԴՊ
Միզասեռական համակարգի խնդիրներ	Առաջնային անպտղություն	72,7%	0,0%	0,0%	4,5%	13,6%	9,1%	0,0%
	Երկրորդային անպտղություն	87,0%	0,6%	2,6%	0,6%	8,4%	0,6%	0,0%
	Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	88,6%	1,4%	1,0%	1,2%	6,5%	1,0%	0,2%

Տղամարդ հարցվողների մոտ ներզատական համակարգի խնդիրների առկայության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 87-ում:

Աղյուսակ 87. Ներզատական համակարգի խնդիրների առկայությունը տղամարդկանց մոտ		Նման խնդիր չունեն/չեն ունեցել	Բուժում չեն ստացել, խնդիրները չեն անցել	Բուժում ստացել են, խնդիրները չեն անցել	Բուժում ստացել են, ապաքինվել են	Ներկայումս բուժման մեջ են	ԴՊ
Ներզատական համակարգի խնդիրներ	Առաջնային անպտղություն	90,9%	0,0%	0,0%	9,1%	0,0%	0,0%
	Երկրորդային անպտղություն	92,9%	0,6%	2,6%	2,6%	1,3%	0,0%
	Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	92,9%	0,7%	0,5%	3,1%	2,1%	0,7%

Աղյուսակ 88-ում ներկայացված են մի շարք առողջական խնդիրներ, որոնք ունեն/ունեցել կամ բուժում են ստացել կին հարցվողներն՝ ըստ տարբեր խմբերի:

Աղյուսակ 88. Հիվանդությունների առկայությունը կանանց մոտ								
Սեռական օրգանների շրջանում քոր կամ տհաճ արտադրություն								
	Նման խնդիր չունեն/չեն ունեցել	Բուժում չեն ստացել, խնդիրները չեն անցել	Բուժում չեն ստացել, վիճակը բարելավվել է	Բուժում ստացել են, խնդիրները չեն անցել	Բուժում ստացել են, ապաքինվել են	Ներկայումս բուժման մեջ են	ԴՆ	ՀՊ

Առաջնային անպտղություն	75,0%	3,6%	0,0%	0,0%	21,4%	0,0%	0,0%	
Երկրորդային անպտղություն	53,1%	2,3%	6,2%	0,0%	37,7%	0,8%	0,0%	
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	52,9%	3,5%	4,6%	3,0%	34,6%	1,2%	0,1%	
Խոցեր կամ գորտնուկներ սեռական օրգանների վրա								
Առաջնային անպտղություն	100,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%	0,0%
Երկրորդային անպտղություն	98,5%	0,0%	0,0%	0,0%	0,8%	0,0%	0,8%	0,0%
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	97,6%	0,5%	0,5%	0,3%	0,4%	0,3%	0,4%	0,1%
Սեռական օրգանների բորբոքային հիվանդություններ								
Առաջնային անպտղություն	82,1%	0,0%	0,0%	0,0%	17,9%	0,0%	0,0%	0,0%
Երկրորդային անպտղություն	79,2%	4,6%	0,8%	0,8%	13,8%	0,0%	0,8%	0,0%
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	73,4%	2,3%	0,9%	2,6%	19,3%	0,4%	1,0%	0,1%
Սեռական օրգանների մաշկի սնկային ախտահարում								
Առաջնային անպտղություն	96,3%	0,0%	0,0%	0,0%	3,7%	0,0%	0,0%	
Երկրորդային անպտղություն	91,6%	0,0%	0,0%	0,0%	6,9%	0,0%	1,5%	
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	91,3%	0,1%	0,1%	0,1%	8,0%	0,1%	0,3%	

Հարցված տղամարդկանց կողմից ներկայացված առողջական խնդիրները ներկայացված են Աղյուսակ 89-ում:


Աղյուսակ 89. Հիվանդությունների առկայությունը տղամարդկանց մոտ								
Սեռական օրգանների շոջանում քոր կամ տհաճ արտադրություն								
	Նման խնդիր չունենալ/չեն ունենցել	Բուժում չեն ստացել, խնդիրները չեն անցել	Բուժում չեն ստացել, վիճակը բարելավվել է	Բուժում ստացել են, խնդիրները չեն անցել	Բուժում ստացել են, ապացիսվել են	Ներկայումս բուժման մեջ են	ԴՊ	ՀՊ
Առաջնային անպտղություն	95,2%	0,0%	0,0%	0,0%	4,8%	0,0%	0,0%	0,0%
Երկրորդային անպտղություն	89,0%	0,0%	0,6%	0,0%	10,4%	0,0%	0,0%	0,0%
Պտղաբերության և ենթադրյալ	88,6%	0,5%	2,8%	0,2%	7,7%	0,2%	0,0%	0,0%

պտղաբերության կարգավիճակ								
Խոցեր կամ գորտնուկներ սեռական օրգանների վրա								
Առաջնային անպտղություն	90,9%	0,0%	0,0%	0,0%	9,1%	0,0%	0,0%	0,0%
Երկրորդային անպտղություն	98,1%	0,0%	0,0%	0,0%	1,9%	0,0%	0,0%	0,0%
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	98,6%	0,5%	0,2%	0,0%	0,2%	0,0%	0,5%	0,0%
Սեռական օրգանների բորբոքային հիվանդություններ								
Առաջնային անպտղություն	82,1%	0,0%	0,0%	0,0%	17,9%	0,0%	0,0%	0,0%
Երկրորդային անպտղություն	79,2%	4,6%	0,8%	0,8%	13,8%	0,0%	0,8%	0,0%
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	73,4%	2,3%	0,9%	2,6%	19,3%	0,4%	1,0%	0,1%
Սեռական օրգանների մաշկի սնկային ախտահարում								
Առաջնային անպտղություն	95,2%	0,0%	0,0%	0,0%	4,8%	0,0%	0,0%	0,0%
Երկրորդային անպտղություն	96,1%	0,0%	0,0%	0,0%	3,2%	0,0%	0,6%	0,0%
Պտղաբերության և ենթադրյալ պտղաբերության կարգավիճակ	94,7%	0,0%	0,2%	0,0%	4,6%	0,0%	0,5%	0,0%

Հարցվող կանանց տրվել են մի շարք այլ հիվանդությունների առկայությունը պարզող հարցեր, որոնք թեև քչերն են նշել, որ ունեցել են, սակայն դրանք առկա են եղել անպտղության տարբեր խմբերին պատկանողների մոտ: Այսպես գոնորեան նշվել է միայն առաջնային անպտղություն ունեցողների կողմից, տրիխոմոնասիազը միայն երկրորդային անպտղություն ունեցողների կողմից, իսկ խլամիդիոզ և գարդեներեյիոզ նշվել է և՛ առաջնային, և՛ երկրորդային անպտղություն ունեցողների կողմից: Տղամարդ հարցվողների շրջանում առաջնային անպտղության խմբում դասված տղամարդկանց կողմից նշվել է միայն բրուցելոզի դեպքի մասին, իսկ երկրորդայինի խմբում դասվածների կողմից՝ հեպատիտ, գոնորեա, տրիխոմոնասիազ, գարդեներեյիոզ և տուբերկուլոզ:


Եթե հարցվող կանայք ունեցել են որովայնային կամ միզասեռական օրգանների վիրահատություններ արդյոք հետագայում ունեցել են հետվիրահատական բարդություններ, հարցի պատասխանները ներկայացված են ստորև՝ Գծապատկեր 78-ում:

Գծապատկեր 78. Ունեցել էք արդյոք որովայնային կամ միզասեռական օրգանների վիրահատություն և հետվիրահատական բարդություններ (կին հարցվողներ)




Նույնը ճշգրտվել է նաև ամուսինների վերաբերյալ: Պատասխանները ներկայացված են Գծապատկեր 79-ում:

Գծապատկեր 79. Ձեր ամուսինն ունեցել է որովայնային կամ միզասեռական օրգանների վիրահատություն և հետվիրահատական բարդություններ




Գծապատկեր 80-ում ներկայացված է, թե տղամարդ հարցվողները երբևէ ունեցել են որովայնային կամ միզասեռական օրգանների վիրահատություններ և եթե ունեցել են, արդյոք հետագայում ունեցել են հետվիրահատական բարդություններ

Գծապատկեր 80. Ունեցել եք արդյոք որովայնային կամ միզասեռական օրգանների վիրահատություն և հետվիրահատական բարդություններ (տղամարդ հարցվողներ)



Ինչպես նաև տվյալ հարցը ճշգրտվել է նաև սրանց կանանց վերաբերյալ (տեղ Գծապատկեր 81):

Գծապատկեր 81. Ձեր կինն ունեցել է որովայնային կամ միզասեռական օրգանների վիրահատություն և հետվիրահատական բարդություններ



Այսպիսով՝ երկրորդային անպտղության առաջացման վրա ազդեցություն են ունենում ձեռք բերված հիվանդություններն ու սեռավարակները: Դրանք ավելի շատ դրսևորվում են տղամարդկանց, քան կանանց մոտ:

Ներկայացված նյութը թերևս ամփոփում է սոցիոլոգիական հետազոտության միջոցով ձեռք բերված տեղեկատվության հիմնական մասերը, սակայն առաջանում է ձեռք բերված տեղեկատվության ավելի մանրամասն ուսումնասիրության, պատճառահետևանքային կապերի ավելի հստակեցման և որոշ ուղղություններով տեղեկատվության ավելի խորացման անհրաժեշտություն:

Ամփոփում և առաջարկներ

Ամփոփելով իրականացված հետազոտության արդյունքների ներկայացումը՝ նշենք հիմնական բացահայտումները և հիմնական առաջարկները

- Ընտանիքներում երեխաների միջին քանակը 2,5 է: Ընտանիքներում շատ երեխաներ ունենալու ցանկությունը և/կամ մտադրվածությունը բավականին ցածր է հարցվածների շրջանում:

Մշակել բազմաուղորտային ռազմավարություններ, որոնց շրջանակներում միջոցառումներ և քայլեր ձեռնարկել հայաստանյան ընտանիքներում իրենց ցանկացած թվով երեխաներ ունենալը հնարավոր դարձնելու համար:

- Վերարտադրողական տարիքի միասին ապրող զույգերի շրջանում անպտղության տարածվածությունը կազմում է 16,8%, որում առաջնային անպտղությունը՝ 1,7%, իսկ երկրորդային անպտղությունը՝ 15,1%: Նշյալ ցուցանիշը բարձր է ԱՅԿ-ի կողմից հաստատված սահմանային ցուցանիշից և այն հանդիսանում է ոչ թե բժշկակենսաբանական, այլ սոցիալ-բժշկական խնդիր:
- Կին հարցվողների շրջանում անպտղությունը կազմում է 14,3%. առաջնային անպտղությունը 1,3% է, իսկ երկրորդայինը՝ 13%: Նախքան տվյալ ուսումնասիրությունը ՀՀ-ում իրականացված վերջին ուսումնասիրության տվյալների¹⁰ համեմատ կանանց շրջանում անպտղության ընդհանուր թիվը մի փոքր նվազել է: Նախկինում կանանց շրջանում անպտղությունը կազմում էր 16,8%. առաջնային անպտղությունը 5,4% էր, իսկ երկրորդայինը՝ 11,4%: Այսպիսով՝ **ըստ կին հարցվողներից ստացված տվյալների՝ առաջնային անպտղությունը նվազել է, իսկ երկրորդային անպտղությունը՝ աճել:**
- Տղամարդ հարցվողների շրջանում առաջնային անպտղությունը 2,2% է, որը նախկինում հաշվարկվել էր 2,3%, իսկ երկրորդայինը՝ 17,6%, որը նախկինում 2,8% էր: Այսպիսով՝ **ըստ տղամարդ հարցվողների՝ աճել է անպտղության աստիճանը, ընդ որում՝ երկրորդային անպտղությունը զգալիորեն ավելի շատ է աճել:**

Իրականացնել պետական միջամտություն, որպեսզի հնարավոր լինի բարելավել Հայաստանում ժողովրդագրական իրավիճակը:

- Կին հարցվողների 37%-ն իր կյանքի ընթացքում երբևէ դիմել է հղիության արհեստական ընդհատման: Թեև մեծամասամբ ընդհատումներն արվել են հղիության մինչև 12 շաբաթը, սակայն եղել են նաև դեպքեր, երբ դրանք արվել են ավելի մեծ ժամկետում: Կանանց 54,4%-ը ցանկացել է երեխա ունենալ ընդհատումից հետո, սակայն փաստացի երեխա է ունեցել կամ այժմ հղի է 44,2%-ը: Ընդհատումների շուրջ 92%-ը իրականացվել է բժիշկ մասնագետների կողմից, 5,7% դեպքերում կանայք ինքնուրույն են ընդհատել հղիությունը:
- Կին հարցվողների 50%-ը, իսկ տղամարդ հարցվողների 54%-ը երբեք չեն օգտագործել ժամանակակից բեղմնականխման միջոցներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռևս հղիությունների արհեստական ընդհատումները կիրառվում են որպես ընտանիքի պլանավորման մեթոդ, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել առողջ ու գրագետ սեռական վարքագիծ վարելու, անցանկալի

¹⁰ 2009թ., ՀՀ առողջապահության նախարարություն, Պրենիտոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտ (Ռ. Աբրահամյան և համահեղինակներ), ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության ներգրավմամբ: Ձեկույցը վերահրատարակվել է 2014թ.-ին:

հղիություններից խուսափելու և յուրաքանչյուր հղիություն ցանկալի լինելու վերաբերյալ բնակչությանը, հատկապես երիտասարդներին կրթելու ուղղությամբ:

Բարձրացնել կանանց և տղամարդկանց իրազեկվածությունը ժամանակակից բեղմնականիման միջոցների արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև հղիությունների ինքնուրույն ընդհատումների բացասական հետևանքների վերաբերյալ:

- Հարցվողների 87%-ը նշել է, որ երբևէ չի ունեցել երեխա ունենալու հետ կապված դժվարություններ, սակայն երբ անպտղությունը հաշվարկվում է սահմանման համաձայն, ստացվում է, որ նման խնդիր չունեն հարցվողների 81.8%-ը: Խնդիրն ընկալողների 74%-ը իր կնոջ/ամուսնու հետ միասին դիմել են բժշկի, 11%-ի դեպքում միայն կինն է դիմել, 15%-ի դեպքում ոչ ոք չի դիմել: Բժշկի դիմող կանանց մեծ մասի մոտ կատարվում են բոլոր անհրաժեշտ հետազոտությունները, մինչդեռ տղամարդկանց մոտ հետազոտությունները մեծամասամբ սահմանափակվում են միայն սերմի հետազոտությամբ:
- Կին հարցվողների գերակշիռ մեծամասնությունը ընդամենը լսել է պտղաբերության վերականգնման նպատակով ժամանակակից վերարտադրողական տեխնոլոգիաների մասին: Քչերն են դիմել ժամանակակից տեխնոլոգիաներին, որոնց մի մասն արդյունքի է հասել, իսկ մի մասը՝ ոչ:

Անպտղության կանխարգելման նպատակով վերարտադրողական տարիքի կանանց և տղամարդկանց հնարավորություն ընձեռել հետազոտություններ և համապատասխան բուժում ստանալ պետական պատվերի շրջանակներում:

Անհրաժեշտ է խրախուսել զույգերին դիմելու և/կամ օգտվելու պտղաբերության վերականգնման ծառայություններից: Դրանց արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է հնարավորություն ստեղծել, որպեսզի հղիանալ ցանկացող զույգը կարողանա ծառայությունից պետական պատվերի շրջանակներում մի քանի անգամ օգտվել: